

# Արձանագրություն թիվ 1

Գավառի պետական համալսարանի 2015թ. հունվարի 15-ի ռեկտորատի նիստի

## Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում
2. Քննաշրջանի ընթացքը առկա ուսուցման ֆակուլտետներում
3. 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստման մասին
4. Հեռակա ուսուցման ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողների նախաավարտական պրակտիկայի և ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման մասին
5. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին 10 անդամներ:

1. **Լսեցին** – Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին իրականացված աշխատանքները՝ հետևյալ ուղղություններով.

- ուսանողների հաճախումների վերահսկում,
- անհատական աշխատանքների և միջանկյալ քննությունների կազմակերպում,
- ներքուհական տեղափոխությունների կազմակերպում,
- Էլեկտրոնային ուսուցման «E-learning GSU» համակարգի կիրառում:

2. **Լսեցին** – Քննաշրջանի ընթացքը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ Գ.Պ. Հ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում կազմակերպված քննաշրջանի ժամանակացույցը, անցկացման ընթացքը, ցուցակներում կատարված փոփոխությունները՝ բանակից զորացրվածների և բանակ զորակոչվածների հետ կապված:

3. **Լսեցին** – 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստման մասին:

/Չեկ.՝ Գ.Պ. Հ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեց առկա ուսուցման ֆակուլտետներում 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստման մասին տեղեկատվություն:

4. **Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողների նախաավարտական պրակտիկայի և ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման մասին:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողների նախաավարտական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվություն և ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման ընթացքը:

5. **Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ Գ.Պ. Հ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ուսման վարձի պարտքերն՝ ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

6. **Ընթացիկ հարցեր:**

6.1. **Լսեցին** – Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթի ընթացքի մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից հայտարարված կրթաթոշակի մրցույթին հայտատու ուսանողների վերաբերյալ թվային տվյալներ:

## Որոշեցին.

1. Գավառի պետական համալսարանի առկա ուսուցման ֆակուլտետներում 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասերը բակալավրիատի բոլոր կուրսերում սկսել ս. թ. փետրվարի 4-ին, ժամը 9:00–ին, իսկ մագիստրատուրայում՝ ս. թ. փետրվարի 11-ին:
2. Ժամանակացույցին համապատասխան հետևողականորեն կազմակերպել Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսումնական գործընթացը, միջանկյալ քննությունները, ստուգարքները, քննությունները:

3. Հետևել դասաձևատյանների ճշգրիտ վարմանը:
4. Միջանկյալ քննությունները և անհատական աշխատանքների ընդունումը կազմակերպել սահմանված ժամանակացույցի համաձայն:
5. Ընթացիկ հարցերի 6.1 ենթակետի համաձայն՝ շարունակել տեղեկացնել ուսանողներին և ապահովել նրանց մասնակցությունը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 2

Գավառի պետական համալսարանի 2015թ. հունվարի 22-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Եվրոպական Միության «TEMPUS.HEN-GEAR» ծրագրի հերթական աշխատաժողովի մասին
2. Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում
3. Բննաշրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում
4. 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստման ընթացքը
5. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին 13 անդամներ:

**1. Լսեցին** - Եվրոպական Միության «TEMPUS.HEN-GEAR» ծրագրի հերթական աշխատաժողովի մասին:

/Չեկ.՝ Գ.Պ. Զ. Նեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեցին Եվրոպական Միության «TEMPUS. HEN-GEAR. Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանը և շրջանավարտների զբաղվածությանն ուղղված բարձրագույն կրթական ցանց» ծրագրի հերթական աշխատաժողովի մասին մանրամասներ: Նշվեց, որ հանդիպմանը Գավառի պետական համալսարանից մասնակցեցին Գ.Պ. Զ. Նեկտոր Ռ-ուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը: Աշխատաժողովի ընթացքում ելույթ ունեցան մասնակից բուհերի ռեկտորները, ովքեր կարևորեցին ծրագրի նպատակները, հայաստանյան համալսարանների շրջանավարտների զբաղվածության ապահովմանը միտված արդի կառուցակարգերի մշակումն ու գործարկումը, ՀՀ-ում «ALMA-LAUREA» միջհամալսարանական կոնտրոլի փորձի ուսումնասիրումն ու տեղայնացումը: Բննարկեցին ծրագրի արդյունքները և հետագա անելիքները:

**2. Լսեցին** - Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին հեռակա ուսուցման ֆակուլտետում ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման վերաբերյալ մանրամասներ:

**3. Լսեցին** - Բննաշրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ Գ.Պ. Զ. ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեց առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի կազմակերպման և անցկացման ընթացքը:

**4. Բննարկվեցին** - 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստման ընթացքի վերաբերյալ հարցեր:

**5. Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ Գ.Պ. Զ. ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**6. Ընթացիկ հարցեր:**

**6.1. Լսեցին** – Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հայտարարած մրցույթի արդյունքների մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հ. Է. Սկրտչյան/

Ներկայացվեցին ս. թ. հունվարի 26-ին ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի գործունեության 6-ամյակին նվիրված միջոցառման շրջանակում հայտարարված «Լավագույն ուսանողական աշխատանք» մրցույթի արդյունքները: Նշվեց, որ մրցույթը կրում էր «Ինչպե՞ս խթանել ֆինանսական միջնորդությունը ՀՀ-ում» խորագիրը: Մրցույթին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի 13 հայտատու ուսանողներ: Գրասենյակի ձևավորած հանձնաժողովը ներկայացված աշխատանքներից ընտրել էր լավագույն երեքը: Հաղթական եռյակում էր նաև Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Ալիտա Ղարաբաղյանը: Մրցանակաբաշխության ընթացքում հաղթողներն արժանացան պատվոգրերի և դրամական խրախուսանքի:

**6.2. Լսեցին** – Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթի ընթացքի մասին:

/Ձեկ՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հ. Է. Սկրտչյան/  
Ներկայացվեցին կրթաթոշակի մրցույթին հայտատու ուսանողների վերաբերյալ թվային տվյալներ:

**6.3. Լսեցին** – ԳՊՀ պաշտոնական կայքի խմբագրման վերաբերյալ:

/Ձեկ՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Հ. Է. Սկրտչյան/  
Ներկայացվեցին ԳՊՀ պաշտոնական կայքի տեղեկատվության խմբագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

### **Որոշեցին.**

1. Ի գիտություն ընդունել ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան որոշմամբ հաստատված ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավարումների ցանկի հայերեն, անգլերեն և ռուսերեն անվանումների վերաբերյալ փաստաթուղթը:
2. Առկա ուսուցման ֆակուլտետներում ընթացիկ ուսումնական տարվա II կիսամյակի դասերի մեկնարկի վերաբերյալ հայտարարությունը եթեր հեռարձակել ս. թ. փետրվարի 3-ին «Գեղամա» հեռուստաընկերությամբ, տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում և բուհի ֆեյսբուքյան էջում:
3. Ավարտուն տեսքի բերել առկա ուսուցման ֆակուլտետներում համապատասխան կուրսերի դասացուցակները և տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում:
4. Ժամանակացույցին համապատասխան հետևողականորեն կազմակերպել ուսանողների ուսումնասիրտադրական և գիտահետազոտական պրակտիկաները:
5. Շարունակել մարզի դպրոցներ այցելությունները:
6. Նախապատրաստել 2014-2015 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ շրջաբերականներ:
7. Պատրաստել 2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հաշվետվությունները և երկրորդ կիսամյակի գործողությունների ծրագիրը:
8. Ընթացիկ հարցերի 6.3 ենթակետի համաձայն՝ աշխատանքներ իրականացնել ԳՊՀ պաշտոնական կայքի տեղեկատվության խմբագրման և համալրման ուղղությամբ:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 3

Գավառի պետական համալսարանի 2015թ. հունվարի 29-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Եվրոպական Միության «TEMPUS.VERITAS» ծրագրի աշխատաժողովի վերաբերյալ
2. Հեռակա ուսուցման ֆակուլտետում ուսումնական գործընթացի և քննաշրջանի ընթացքը
3. Առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի ընթացքը, արդյունքները
4. 2014-2015 ուսումնական տարվա նախապատրաստման գործընթացը
5. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած մրցույթին ԳՊՀ ուսանողների մասնակցության հարցը
6. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
7. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 13 անդամներ:

**1. Լսեցին** - Եվրոպական Միության «TEMPUS.VERITAS» ծրագրի աշխատաժողովի վերաբերյալ:

/Չեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեց ս. թ. հունվարի 26-ին և 27-ին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում տեղի ունեցած Եվրոպական Միության «Tempus. Veritas» (Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի ներդրում՝ հիմնված զալցբուրգյան սկզբունքների վրա) ծրագրի հերթական աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ աշխատաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ Համաշխարհային համալսարանական ծառայությունից (Ավստրիա), Տեխնոլոգիայի քաղաքական ինստիտուտից (Շվեդիա), Ջիրոնայի (Իսպանիա), Բաթ Սպա (Միացյալ Թագավորություն), ինչպես նաև Գավառի պետական, Երևանի պետական, Հայաստանի պետական տնտեսագիտական, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային, Հյուսիսային, Վանաձորի պետական համալսարաններից: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի պատվիրակներ: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցում էին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, ԳՊՀ Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հրաչյա Չաքոյանը, Բանասիրական ֆակուլտետի փոխդեկան Մարինե Բաղայանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը: Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին Հայաստանի Հանրապետությունում հետքուհական կրթական ծրագրերի, թեկնածուական և դոկտորական աշխատանքների իրականացման որակի ապահովման չափանիշները, կիրառվող գործիքները:

**2. Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետում ուսումնական գործընթացի և քննաշրջանի ընթացքը:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետում ուսումնական գործընթացի, միջանկյալ և կիսամյակային քննությունների կազմակերպման, ուսանողների հաճախումների վերահսկման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

**3. Լսեցին** - Առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի ընթացքը, արդյունքները:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ստուգաթղթերի ու քննությունների կազմակերպման ընթացքը, մասնակցած ուսանողների քանակը, առաջադիմության արդյունքները:

**4. Քննարկվեցին** - 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստման վերաբերյալ հարցեր:

**5. Լսեցին** - Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած մրցույթին ԳՊՀ ուսանողների մասնակցության հարցը:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին կրթաթոշակի մրցույթին հայտատու ուսանողների վերաբերյալ թվային տվյալներ, նշվեց, որ մինչ այժմ հավաքագրվել են 26 ուսանողների փաստաթղթեր:

**6. Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

## 7. Ընթացիկ հարցեր:

**7.1. Լսեցին** - «TEMPUS-PACT» ծրագրի շրջանակում կայացած հերթական աշխատանքային հանդիպման մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեցին ս. թ. հունվարի 25-28-ը Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում տեղի ունեցած «TEMPUS-PACT» ծրագրի հերթական՝ 4-րդ աշխատանքային հանդիպման վերաբերյալ մանրամասներ: Նշվեց, որ հանդիպումը կազմակերպվել էր Վրաստանի Իլիայի պետական համալսարանում և նպատակ ուներ հստակեցնելու երիտասարդ մասնագետների վերապատրաստման ու գիտական հետազոտությունների ծրագրի վերաբերյալ հարցեր:

**7.2. Լսեցին** - ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերի վերաբերյալ:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձը մասամբ կամ լրիվ փոխհատուցող կրթական հիմնադրամների և կրթաթոշակային ծրագրերի վերաբերյալ մանրամասներ: Նշվեց, որ «ՎիվաՍել ՄՏՍ» կրթական ֆոնդ ծրագրում վերահաստատվել են ՀՀ զինված ուժերում զինվորական պարտադիր ծառայությունն ավարտած և վերադարձած, ԳՊՀ Իրավագիտություն բաժնի 3-րդ կուրսի 2 ուսանող՝ Ներսիսյանը և Արսեն Գևորգյանը:

## Որոշեցին.

1. Աշխատանքներ իրականացնել «Erasmus +» ծրագրի շրջանակում հայտերի նախապատրաստման ուղղությամբ:
2. Տալ շնորհակալագիր «Օրանժ Հայաստան» ընկերության նախագահին՝ ս. թ. փետրվարի 20-ին կայանալիք հանդիպման ընթացքում, ինչպես նաև ապահովել «Օրանժ Հայաստան» հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ԳՊՀ 10 ուսանողների մասնակցությունը հիշյալ հանդիպմանը:
3. Հետևել 2014-2015 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ շրջաբերականների կատարան ընթացքին:
4. Պատրաստել 2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հաշվետվությունները և երկրորդ կիսամյակի գործողությունների ծրագիրը:
5. Քննաշրջանն ավարտելուց հետո «Ժիրայր Նիշանյանի անվան կրթաթոշակային ծրագրում ընդգրկված ուսանողների առաջադիմության վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան

## Արձանագրություն թիվ 4

Գավառի պետական համալսարանի 2015թ. փետրվարի 5-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. ԳՊՀ ներքին գնահատման և ինքնավերլուծության գործընթացի մասին /Ձեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 10 անդամներ:

1. **Լսեցին** – ԳՊՀ ներքին գնահատման և ինքնավերլուծության գործընթացի մասին:

/Ձեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեց ԳՊՀ ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից բուհի ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացի կազմակերպման և անցկացման ընթացքը:

2. **Ընթացիկ հարցեր:**

- 2.1. **Լսեցին** – 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի մեկնարկի մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեց ընթացիկ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի մեկնարկի վերաբերյալ տեղեկատվություն: Ձեկուցողները հայտնեցին, որ նախապես կազմվել են համապատասխան ֆակուլտետի դասացուցակները, որոնք տեղադրվել են ԳՊՀ պաշտոնական [www.gsu.am](http://www.gsu.am) կայքում:

- 2.2. **Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

- 2.3. **Լսեցին** – Գավառի պետական համալսարանում անգլերեն լեզվի դասընթացների մեկնարկի մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանում գործող Հայաստանի ամերիկյան համալսարանի շարունակական կրթության ամբիոնի կողմից հայտարարված անգլերեն լեզվի դասընթացների մեկնարկի, խմբերի հավաքագրման, ծրագրի շրջանակում ընդհանուր աշխատանքների համակարգման մասին:

### Որոշեցին.

1. Օրակարգի ընթացիկ հարցերի 2.3 ենթակետի համաձայն՝ հետևողական լինել դասընթացների պատշաճ կազմակերպման ուղղությամբ:
2. ԳՊՀ ռեկտորատ ներկայացնել ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի գործողությունների պլանը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան

## Արձանագրություն թիվ 5

Գավառի պետական համալսարանի 2015թ փետրվարի 12-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Ինքնավերլուծության գործընթացը ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում
3. Քննաշրջանի ընթացքը հեռակա ուսուցման ֆակուլտետում
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 11 անդամներ:

1. **Լսեցին** – Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները, միջանկյալ քննությունների, առաջին լուծարային շրջանի կազմակերպման և անցկացման, ուսանողների հաճախումների, ակադեմիական առաջադիմության, մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացքի վերաբերյալ հարցեր:

2. **Քննարկվեցին** - Գավառի պետական համալսարանի ինքնավերլուծության գործընթացի կազմակերպման վերաբերյալ հարցեր:

3. **Լսեցին** - Քննաշրջանի ընթացքը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանին մասնակցած ուսանողների քանակը և առաջադիմության արդյունքները:

4. **Ընթացիկ հարցեր:**

**4.1. Լսեցին** – «TEMPUS. New LeAGUe-Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի հերթական աշխատաժողովի մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց ս. թ. փետրվարի 2-ից 5-ը Դանիայի տեխնիկական համալսարանում կայացած Եվրոպական Միության «TEMPUS. New LeAGUe-Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի հերթական աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն, նշվեց, որ Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը:

- 4.2. Լսեցին** – Սևանի Վազգենյան դպրանոցում կազմակերպված տոնակատարության մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ղեկան Հ. Գ. Ղաջոյան/

Ներկայացվեց ս. թ. փետրվարի 12-ին Սևանի Վազգենյան դպրանոցում կազմակերպված տոնակատարության մասին տեղեկատվություն, նշվեց, որ այն նվիրված էր Սուրբ Վարդանանց զորավարների և 1036 վկաների հիշատակության օրվան: Տոնակատարությանը մասնակցեց Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը՝ ի դեմս Հումանիտար մասնագիտությունների և Տնտեսագիտական ֆակուլտետների ղեկաններ Հալետ Ղաջոյանի և Սամվել Ամիրխանյանի, ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերության նախագահ, Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Նունե Միրիբյանի, ՈւԳԸ անդամներ, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Պատմություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Աննա Մադաթեյանի և Հեռակա ուսուցման ֆակուլտետի Կենսաբանություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Թագուհի Սահակյանի:

- 4.3. Լսեցին** – «Լավագույն ուսանող-2014» հանրապետական մրցույթի մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին ս. թ. փետրվարի 7-ին ամփոփված «Լավագույն ուսանող-2014» հանրապետական մրցույթի արդյունքները: Նշվեց, որ մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Հայ առաքելական եկեղեցու քրիստոնեական դաստիարակության կենտրոնի փոխտնօրեն Հայր Գարեգին արքեպիսկոպոս Համբարձումյանը, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներ, այլ ներկայացուցիչներ և ուսանողներ: Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ բակալավրիատի և



մագիստրատուրայի 38 ուսանողներ համապատասխան անվանակարգերում ճանաչվեցին լավագույնը և արժանացան մրցանակների: Լավագույն ուսանողների շարքում էին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի ուսանողուհի Էմմա Լազյանը և Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի մագիստրատուրայի ուսանող Մարգար Հովհաննիսյանը, ովքեր մագիստրոսի կրթական ծրագրով հումանիտար և բնագիտական ոլորտների անվանակարգերում զբաղեցրին 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերը:

**4.4. Լսեցին** - ԳՊՀ [www.gsu.sm](http://www.gsu.sm) պաշտոնական կայքի թարմացումների մասին:

/Ձեկ՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Խոսվեց ԳՊՀ պաշտոնական կայքում կատարված թարմացումների, համալրումների և ընթացիկ աշխատանքների մասին:

#### **Որոշեցին.**

1. Օրակարգի 2-րդ հարցի համաձայն՝ ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժին ներկայացնել բուհի կառուցվածքային ստորաբաժանումների ինքնավերլուծության համապատասխան չափորոշիչների և չափանիշների վերաբերյալ կատարված աշխատանքների թղթային և էլեկտրոնային տարբերակները:
2. Կազմել ժամանակացույց ֆակուլտետների դեկանների և ամբիոնի վարիչների 2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ:
3. Իրազեկել ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին՝ սահմանված կարգով ներկայացնելու 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի գործողությունների ծրագրերը:
4. Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ խորհրդի 2015 թվականի խորհրդի նիստի պատշաճ կազմակերպման ուղղությամբ:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 6

Գավառի պետական համալսարանի 2015թ. փետրվարի 19-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Նիդերլանդների Թագավորության Ամստերդամի համալսարան գործուղման արդյունքների մասին
2. Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում
3. Քննաշրջանը և լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
4. Ինքնավերլուծության ընթացքը համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում
5. Ընտանիքի տարվան նվիրված միջոցառումների անցկացման և ՀՀ ԿԳ նախարարությանը տեղեկատվության տրամադրման մասին
6. Ուսման վարձերի վճարման ընթացքը
7. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 14 անդամներ:

**1. Լսեցին** - Նիդերլանդների Թագավորության Ամստերդամի համալսարան գործուղման արդյունքների մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց ս. թ. փետրվարի 10-ից 12-ը Նիդերլանդների Թագավորության Ամստերդամի համալսարանում կայացած Եվրոպական Միության «TEMPUS.ATHENA» ծրագրի հերթական աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ աշխատաժողովը կրում էր «Մարդկային ռեսուրսների կառավարում և անձնակազմի կարողությունների զարգացում» խորագիրը: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը:

**2. Լսեցին** – Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի անխափան անցկացման և լուծարային շրջանի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները, առարկայական պարտքեր ունեցող ուսանողների վերաբերյալ թվային տվյալներ:

**3. Լսեցին** - Քննաշրջանը և լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկ Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետում նախապես մշակված ժամանակացույցերին համաձայն՝ քննաշրջանի և լուծարային շրջանի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

**4. Քննարկվեցին** - Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում ինքնավերլուծության կազմակերպման վերաբերյալ հարցեր:

**5. Քննարկվեցին** - ԳՊՀ-ում Ընտանիքի տարվան նվիրված միջոցառումների, սեմինար-քննարկումների, շարադրությունների ու էսսեների մրցույթների անցկացման և ՀՀ ԿԳ նախարարությանը տեղեկատվության տրամադրման վերաբերյալ հարցեր:

**6. Լսեցին** - Ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**7. Ընթացիկ հարցեր:**

**7.1. Լսեցին** - «ՎիվաՄեյլ USU» ընկերության կողմից կազմակերպվող պրակտիկայի վերաբերյալ:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց «ՎիվաՄեյլ USU» ընկերության կողմից կազմակերպվող պրակտիկայի, դիմորդներին ներկայացվող պահանջների, մասնակցության պայմանների, դիմելու վերջնաժամկետների վերաբերյալ տեղեկատվություն:

**7.2. Լսեցին** - Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառման մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին բուհի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված և սիրո գովերգմանը նվիրված միջոցառման վերաբերյալ մանրամասներ:

**Որոշեցին.**

1. Օրակարգի ընթացիկ հարցերի 7.1 կետի համաձայն՝ տեղեկացնել համապատասխան ուսանողներին և ապահովել նրանց մասնակցությունը:
2. «ՎիվաՍելլ ՄՏՍ» ընկերությանը ներկայացնել հաշվետվություն նշված ընկերության կրթավճար ծրագրում ընդգրկված ուսանողների առաջադիմության կիսամյակային արդյունքների վերաբերյալ:
3. Շարունակել «Դասը վարում է ԳՊՀ պրոֆեսորը» հաղորդաշարը, կազմել ժամանակացույց՝ համապատասխան դասախոսների և դասախոսությունների թեմաներով:
4. ԳՊՀ պաշտոնական կայքի տիրույթում ստեղծել «Ֆիլմադարան» հատվածամաս, համալրել պատմական հետաքրքիր և ուսանելի ֆիլմերով:
5. Կազմակերպել «Գիրք զիվորին», «Մաղթանք զինվորին», «Նվեր զինվորին» ակցիաները, համապատասխան հայտարարությունները տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:
6. Ս. թ.Փետրվարի 19-ի՝ Ամենայն հայոց բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս Հովհաննես Թումանյանի ծննդյան և Գիրք նվիրելու օրերին նվիրված՝ բուհում հայտարարել գիրք նվիրելու միամսյակ և վերջնաժամկետ նշանակել ս. թ. մարտի 23-ը՝ Հովհաննես Թումանյանի մահվան տարելիցի օրը: Հայտարարված ակցիայի շրջանակում կազմակերպել միջոցառումներ և կատարել գրքերի նվիրատվություններ մարզի գործառնների գրադարաններին:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 7

Գավառի պետական համալսարանի 2015թ. մարտի 5-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Քննաշրջանը և լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
3. Ինքնավերլուծության և ինքնագնահատման ընթացքը ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում
4. Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման մասին
5. ԳՊՀ 17-րդ գիտաժողովի նյութերի հավաքագրման ընթացքը
6. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
7. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 14 անդամներ:

1. **Լսեցին** – Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում:  
/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի և լուծարային շրջանի անխափան անցկացման ուղղությամբ աշխատանքները:

2. **Լսեցին** - Քննաշրջանը և լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:  
/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետում ըստ բաժինների և կուրսերի՝ առարկայական պարտք ունեցող ուսանողների թիվը, քննությունների, բաց դռների օրերի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

3. **Քննարկվեց** - Ինքնավերլուծության և ինքնագնահատման ընթացքը ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում:

4. **Քննարկվեցին** - Գավառի պետական համալսարանում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման մասին հարցեր:

5. **Լսեցին** – ԳՊՀ 17-րդ գիտաժողովի նյութերի հավաքագրման ընթացքը:

/Չեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեց ԳՊՀ ամբիոնների կողմից Որակի ապահովման բաժին ներկայացված հոդվածների թիվը:

6. **Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեց ուսման վարձերի հավաքագրման ընթացքը:

### 7. Ընթացիկ հարցեր:

**7.1. Քննարկվեցին** – ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման վարձերի նվազագույն և առավելագույն շեմերի սահմանման հետ կապված հարցեր:

**7.2. Քննարկվեցին** - ԳՊՀ-ում Ընտանիքի տարվան նվիրված միջոցառումների կազմակերպման վերաբերյալ հարցեր:

- 7.3. **Լսեցին** – Հայոց լեզվի արդի հիմնախնդիրներին նվիրված կլոր սեղան-քննարկման մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ղեկան Թ. Ա. Ասոյան/

Ներկայացվեց Գավառի պետական համալսարանի ընթերցասրահում, ԳՊՀ գրադարանի և Ուսանողական գիտական ընկերության մախաձեռնությամբ կազմակերպված, հայոց լեզվի արդի հիմնախնդիրներին նվիրված կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տեղեկատվություն:

**7.4. Լսեցին** – Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ռուզաննա Սարգսյանի՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ղեկան Թ. Ա. Ասոյան/

Ներկայացվեց ուրախալի լուր՝ ս. թ. փետրվարի 25-ին Գավառի պետական համալսարանի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ռուզաննա Սարգսյանի՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան

պետական լեզվահասարակագիտական համալսարանում գործող ԲՈՀ-ի 059 «Սլավոնական լեզուներ» մասնագիտական խորհուրդում (ԺԳ.00.02 Գասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ռուսաց լեզու) մասնագիտությամբ) մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար թեկնածուական ատենախոսության պաշտպանության մասին:

**7.5. Լսեցին** – Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում կազմակերպված միջբուհական ուսանողական գիտաժողովին ԳՊՀ ուսանողների մասնակցության մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան Մ. Ն. Հերզոյան/

Ներկայացվեցին ս. թ. մարտի 3-ին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում կազմակերպված միջբուհական ուսանողական գիտաժողովին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 5 ուսանողների մասնակցության մասին մանրամասներ:

**7.6. Լսեցին** – «ԱՄԶՈՐ» հասարակական կազմակերպության կրթաթոշակային մրցույթի մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին «ԱՄԶՈՐ» հասարակական կազմակերպության կողմից հայտարարված կրթաթոշակային մրցույթի արդյունքները, նշվեց, որ ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի 17 ուսանողների ուսման վարձը կփոխհատուցվի ծրագրի շրջանակում:

**7.7. Լսեցին** – ՀԵՀ կրթաթոշակային մրցույթի արդյունքների մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից հայտարարված 2015թ. կրթաթոշակային մրցույթի արդյունքները: Նշվեց, որ մրցութային հանձնաժողովի օբյեկտիվ գնահատմամբ՝ ստացված մոտ 1040 հայտադիմումներից ընտրվել էին բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով կարգավիճակում գտնվող շուրջ 650 ուսանողներ, ովքեր ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի կողմից հանդիսավոր կերպով ստացան հավաստագրեր: Գավառի պետական համալսարանից ՀԵՀ կրթաթոշակային մրցույթում հաղթող ճանաչվեցին 23 ուսանող:

**7.8. Լսեցին** - ԳՊՀ-ում «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղերի մեկնարկի մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանում մարզի դպրոցների աշակերտների և քոլեջների ուսանողների համար կազմակերպվող «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղերի վերաբերյալ մարմամասներ:

**7.9. Լսեցին** - «Օրանժ Հայաստան» ընկերությունում կայացած հանդիպման մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց ս. թ. փետրվարի 20-ին Orange-ի գլխամասային գրասենյակում Orange Հիմնադրամի խորհրդի նախագահ Ֆրանսիս Ժելիբտերի հետ Հայաստանի Հանրապետության 10 բարձրագույն ուսումնական հաստատությունների շուրջ 100 սովորողների, այդ թվում՝ ԳՊՀ 10 ուսանողների հանդիպման վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ Գավառի պետական համալսարանի անունից բուհի Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը շնորհակալագիր հանձնեց պարոն Ֆրանսիս Ժելիբտերին և բուհի ողջ հանրույթի անունից խորին երախտագիտություն հայտնեց աջակցության և համագործակցության համար:

## **Որոշեցին.**

1. Օրակարգի 4-րդ կետից ելնելով՝ կազմել միջոցառումների ժամանակացույց-գործողությունների պլան և հետևելով դրան՝ ապահովել պատշաճ կազմակերպում, լուսաբանում ՀՀ լրատվամիջոցներով:
2. Օրակարգի 5-րդ կետից ելնելով՝ հետևողական լինել աշխատանքների հավաքագրման, ամբողջացման և տպագրության ուղարկման ուղղությամբ: Աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ սահմանել ս.թ. ապրիլի 30-ը:
3. Օրակարգի ընթացիկ հարցերի 7.1 ենթակետի համաձայն՝ հստակեցնել ԳՊՀ բաժինների և համապատասխան վարձավճարի ցուցակը:
4. Հետևել ԳՊՀ դասամատյանների պատշաճ լրացման ընթացքին:
5. Շնորհակալական նամակ ուղարկել «ԱՄԶՈՐ» հասարակական կազմակերպության տնօրենին՝ ԳՊՀ 17 ուսանողներին ֆինանսավորելու համար:
6. Մարտի 8-ը՝ որպես ոչ աշխատանքային օրվա դասերը լրացնել սահմանված կարգով:

7. Բացակայություններ ունեցող ուսանողներին հայտարարել նկատողություն և խիստ նկատողություն:
8. Ապահովել ԳՊՀ համապատասխան ուսանողների մասնակցությունը «Կապուտակ Սևան» հասարակական կազմակերպության կողմից հայտարարված թափուր աշխատատեղերի մրցույթին:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 8

Գավառի պետական համալսարանի 2015թ. մարտի 12-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի նիստի արդյունքների մասին
2. Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում
3. Քննաշրջանը և լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
4. ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացը
5. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 13 անդամներ:

1. **Լսեցին** - ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի նիստի արդյունքների մասին:  
/Չեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեցին ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի նիստի ընթացքում քննարկված օրակարգային հարցերը:

2. **Լսեցին** - Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում:  
/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի և լուծարային շրջանի կազմակերպման ու անցկացման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

3. **Լսեցին** - Քննաշրջանը և լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:  
/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանին մասնակցած ուսանողների քանակը և առաջադիմության արդյունքները:

4. **Քննարկվեցին** - ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացի կազմակերպման վերաբերյալ մանրամասներ:

5. **Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:  
/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ֆակուլտետներում ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողների վերաբերյալ թվային տվյալներ:

#### 6. **Ընթացիկ հարցեր:**

- 6.1. **Լսեցին** - ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերի վերաբերյալ:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձը մասամբ կամ լրիվ փոխհատուցող կրթական հիմնադրամների և կրթաթոշակային ծրագրերի վերաբերյալ մանրամասներ:

- 6.2. **Լսեցին** - Հաշվետու շաբաթվա ընթացքում կազմակերպված միջոցառումների մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց հաշվետու շաբաթվա ընթացքում ԳՊՀ-ում կազմակերպված միջոցառումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

6.3. **Քննարկվեցին** - Առաջիկա շաբաթվա ընթացքում կազմակերպվելիք ներբուհական և արտահամալսարանական միջոցառումների, աշխատանքային հանդիպումների վերաբերյալ հարցեր:

#### Որոշեցին.

1. Օրակարգի 1-ին կետի համաձայն՝ ներկայացնել առաջարկություններ Եվրոպական Միության «Հորիզոն-2020» և «Erasmus +» ծրագրերի վերաբերյալ:
2. Օրակարգային ընթացիկ հարցերի 6.3 կետի համաձայն՝ ապահովել առաջիկա շաբաթվա ընթացքում կազմակերպվելիք ներբուհական և արտահամալսարանական միջոցառումների, աշխատանքային հանդիպումների լուսաբանումը:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանի համաձայն՝ Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի շրջանակում կազմակերպել այցելություններ ՀՀ քանգարաններ, պատմամշակութային վայրեր:
4. Գավառի պետական համալսարան հրավիրել Սևանի, Հրազդանի և Վարդենիսի պետական քոլեջների մանկավարժական և ուսանողական անձնակազմի ներկայացուցիչներին և կազմակերպել «Բաց դռների օրեր»:
5. Սկսել Ակադեմիական քաղաքականության վարչության կողմից ԳՊՀ ամբիոններում իրականացնել ստուգումները:
6. Հետևողական լինել ուսման վարձերի՝ սահմանված ժամկետներում վճարման ընթացքին:
7. Կազմակերպել Իսպանիայի Կոռունայի համալսարանից 6-ամսյա ժամկետով իրենց ուսումնառությունը ԳՊՀ-ում շարունակող ուսանողների ամփոփիչ շնորհանդես-հաշվետվությունները, ապահովել ԳՊՀ պաշտոնական կայքում և մարզի լրատվամիջոցներով դրա լուսաբանումը:
8. Շարունակել դպրոց-բուհ համագործակցության շրջանակում մարզի դպրոցներ կատարվող այցելությունները և ԳՊՀ-ում դպրոցականների ինտելեկտուալ խաղերի կազմակերպումը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան



## Արձանագրություն թիվ 9

Գավառի պետական համալսարանի 2015թ. ապրիլի 2-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Ինքնավերլուծության ընթացքը համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 12 անդամներ:

1. **Լսեցին** - Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի անխափան անցկացման և լուծարային շրջանի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

2. **Քննարկվեցին** - Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում ինքնավերլուծության գործընթացի վերաբերյալ հարցեր:

3. **Ընթացիկ հարցեր:**

3.1. **Լսեցին** – Եվրոպական Միության «Twinning – Հայաստանի բարձրագույն կրթության հզորացում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նատակով» ծրագրի մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց Գավառի պետական համալսարանում Եվրոպական Միության «Twinning – Հայաստանի բարձրագույն կրթության հզորացում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նատակով» ծրագրի փորձագետներ, մշտական խորհրդատու Կարլ Հոլմի և Արևելյան Ֆինլանդիայի համալսարանի ավագ համակարգող, կարճաժամկետ խորհրդատու Թոմի Հափանիմի հետ կայացած հանդիպման վերաբերյալ տեղեկատվություն:

3.2. **Լսեցին** – ԵՄ «TEMPUS. RETHINK» ծրագրի հերթական աշխատաժողովի մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեց ս. թ. մարտի 9-12-ը Ուկրաինայի Հանրապետության Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում տեղի ունեցած Եվրոպական Միության «TEMPUS. RETHINK» ծրագրի հերթական աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն, որին Գավառի պետական համալսարանից մասնակցեց պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

3.3. **Լսեցին** – Եվրոպական Միության «TEMPUS. ARARAT» ծրագրի հերթական աշխատաժողովի մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեցին Գերմանիայի Կորլենց քաղաքի Լանդաու համալսարանում կայացած Եվրոպական Միության «TEMPUS. ARARAT» ծրագրի հերթական աշխատաժողովի վերաբերյալ մանրամասներ, որին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի Ակադեմիական քաղաքականության վարչության միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը և ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ավետիք Նանագույանը:

3.4. **Լսեցին** – Եվրոպական Միության «ERASMUS MUNDUS. HERMES» միջազգային ծրագրի 2015-2016 ուսումնական տարվա արդյունքների մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի ներքոհիշյալ ուսանողների և դասախոսների անունները, ովքեր 2015-2016 ուսումնական տարվա համար Եվրոպական Միության «ERASMUS MUNDUS. HERMES» միջազգային ծրագրի շրջանակում հնարավորություն են ստացել կրթությունը Եվրոպական առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակելու և գիտական հետազոտություն կատարելու:

Հիշյալ անձինքն՝

1. Գավառի պետական համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Գրիգորյան (Գերմանիայի Ֆրանկֆուրտի Վիադրինա համալսարան)
2. ԳՊՀ դասախոս Գայանե Միրիբյան (Գերմանիայի Ֆրանկֆուրտի Վիադրինա համալսարան),
3. ԳՊՀ դասախոս Ռիտա Միդելնիկովան (Բուլղարիայի Սոֆիայի համալսարան)
4. ԳՊՀ դասախոս Գայանե Սարգսյան (Իտալիայի Վենետիկի համալսարան)

5. ԳՊՀ ուսանող Մարիամ Սուքիասյան (Իտալիայի Սալերնոյի համալսարան)
6. ԳՊՀ ուսանող Նարեկ Արևշատյան (Իտալիայի Սալերնոյի համալսարան)
7. ԳՊՀ ուսանող Նորիկ Համբարձումյան (Իտալիայի Սալերնոյի համալսարան)
8. ԳՊՀ ուսանող Տիգրան Չանդոյան (Բուլղարիայի Սոֆիայի համալսարան)
9. ԳՊՀ ուսանող Արտեմ Հակոբյան (Գերմանիայի Ֆրանկֆուրտի Վիտրիմա համալսարան)

Բանախոսը հավելեց, որ Շվեդիայի Լինկոլնինգ համալսարանի բակալավրիատի ուսանող Ֆելիքս Օստմանը (իրավաբան) և Հունաստանի Աթենքի համալսարանի բակալավրիատի ուսանողուհի Ֆանոուրիա Կոնստանտոնին (բանասեր) իրենց կրթությունը կշարունակեն Գավառի պետական համալսարանում:

3.5. **Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքի վերաբերյալ թվային տվյալներ:  
/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ֆակուլտետներում ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ուսման վարձերի պարտքեր ունեցող ուսանողների վերաբերյալ թվային տվյալներ:

3.6. **Լսեցին** – [www.dasaran.am](http://www.dasaran.am) կայքի ԳՊՀ էջի տեղեկատվության համալրման մասին:  
/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց [www.dasaran.am](http://www.dasaran.am) կայքի Գավառի պետական համալսարանի էջի տեղեկատվության համալրման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին:

3.7. **Լսեցին** – Գնահատման և թեստավորման կենտրոնի /ԳԹԿ/ կողմից ուղարկված գրության մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին ԳԹԿ-ի կողմից ուղարկված գրության վերաբերյալ մանրամասներ, որի համաձայն 2015 թվականի միասնական քննությունների ընթացքում որպես կազմակերպիչ ներգրավված կլինեն Գավառի պետական համալսարանի 11 ուսանողներ:

3.8. **Լսեցին** - «ԱՄՔՈՐ» հասարակական կազմակերպության կրթաթոշակային մրցույթի մասին:  
/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին «ԱՄՔՈՐ» հասարակական կազմակերպության կողմից հայտարարած կրթաթոշակային մրցույթի արդյունքները, նշվեց, որ ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի 17 ուսանողների ուսման վարձը կփոխհատուցվի ծրագրի շրջանակում:

3.9. **Լսեցին** - Հաշվետու շաբաթվա ընթացքում կազմակերպված միջոցառումների մասին:  
/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց հաշվետու շաբաթվա ընթացքում Հայոց Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված գրական ցերեկույթի, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի 10-ամյակին նվիրված միջոցառման, Հայաստանում գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (Deutscher Akademischer Austausch Dienst - DAAD) ներկայացուցիչների հետ հանդիպման, Եվրոպական Միության ուսանողների ակադեմիական փոխանակման ծրագրով Իսպանիայից Գավառի պետական համալսարանում վեցամսյա ժամկետով ուսումը շարունակելու հնարավորություն ստացած ուսանողներ Մանուել Ֆերնանդեզ Կորգոյի և Ադրիան Գարսիա Նունյեզի հաշվետու հանդիպման և ներկայացրած շնորհանդես-հաշվետվությունների, բուհի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև համագործակցության ծրագրի շրջանակում քոլեջների ուսանողների՝ ԳՊՀ ճանաչողական այցերի, «բաց դռների» օրերի, Հայաստանի գործատուների հանրապետական միությանը կից գործող Գործարարության դպրոցի կողմից կարիերայի պլանավորման մասին կազմակերպված սեմինար-դասընթացի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, նշվեց, որ ապահովվել է ԳՊՀ պաշտոնական կայքում պատշաճ լուսաբանումը:

**Որոշեցին.**

1. ԳՊՀ միջազգային ծրագրերն իրականացնել՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան:
2. Շարունակել ապահովել ներքուհական և արտահամալսարանական իրադարձությունների լուսաբանումը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

# Արձանագրություն թիվ 10

Գավառի պետական համալսարանի 2015թ. ապրիլի 8-ի ռեկտորատի ընդլայնված նիստի

## Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության 1-ին չափորոշիչի քննարկում
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 44 անդամներ:

1. **Լսեցին** – Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:  
/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

2. **Քննարկվեցին** – Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության 1-ին չափորոշիչի վերաբերյալ հարցեր, որին հաջորդեցին նախապես ձևավորված խմբերում կազմակերպված աշխատանքային քննարկումները, համապատասխան չափորոշիչի գծով բուհի թույլ և ուժեղ կողմերի, ներքին վտանգների և արտաքին հնարավորությունների /SWOT/ վերլուծությունների կատարումը:

### 3. Ընթացիկ հարցեր:

- 3.1. **Լսեցին** - ԵՄ «TEMPUS. RETHINK» ծրագրի հերթական աշխատաժողովի մասին:  
/Չեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեցին ս. թ. մարտի 9-ից 12-ը Ուկրաինայի Հանրապետության Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում տեղի ունեցած Եվրոպական Միության «TEMPUS. RETHINK – Կրթության բարեփոխում՝ գիտելիքների միջազգային փոխանակման միջոցով» ծրագրի հերթական աշխատաժողովի վերաբերյալ մանրամասներ: Նշվեց, որ աշխատաժողովի ընթացքում քննարկվել են հարցեր 2015 թվականի սեպտեմբեր ամսից կրկնակի դիպլոմների շնորհմամբ կրթական ծրագրի իրականացման վերաբերյալ: Բանախոսը հավելեց, որ Գավառի պետական համալսարանը «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության գծով կրկնակի դիպլոմների շնորհման երկկողմ պայմանագիր է ստորագրել Իսպանիայի Կոռունյայի համալսարանի, ինչպես նաև հուշագիր՝ Մոլդովայի պետական պոլիտեխնիկական համալսարանի հետ:

- 3.2. **Լսեցին** - Հաշվետու շաբաթվա ընթացքում կազմակերպված միջոցառումների մասին:  
/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց սեմինար-դասախոսությունների, Ընտանիքի տարվա շրջանակում կազմակերպված կլոր սեղան-քննարկման, մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման, Սուրբ Չատկին նվիրված տոնակատարության վերաբերյալ տեղեկատվություն:

- 3.3. **Լսեցին** - «Մերօրյա հերոսը» խորագրով շարադրությունների մրցույթի արդյունքների մասին:  
/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի Ուսանողական գիտական ընկերությանը կից գործող «Հայրենատերերի ակումբի» նախաձեռնությամբ և Ջինիշյան հիշատակի հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված «Մերօրյա հերոսը» խորագրով շարադրությունների մրցույթի արդյունքները:

«Մերօրյա հերոսը» խորագրով շարադրությունների մրցույթի հաղթողների անունները ներկայացվում է ստորև.

Առաջին տեղ՝ Սիլվարդ Ղազարյան՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի Ընդհանուր բժշկության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի,

Երկրորդ տեղ՝ Տարոն Խաչատրյան՝ Գավառի Ավ. Իսահակյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ,

Երրորդ տեղ և «Ընթերցողի համակրանք» անվանակարգ՝ Լուսինե Մանուկյան՝ Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի:

Բանախոսը հավելեց, որ հաղթողները ստացան պատվոգրեր և նվերներ, իսկ բոլոր մասնակիցները՝ շնորհակալագրեր:

### **Որոշեցին.**

1. Ապահովել ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողների և շրջանավարտների մասնակցությունը ս. թ. ապրիլի 16-ին կայանալիք «Կրթություն Հայաստան» կրթական հասարակական կազմակերպության ներկայացուցիչների հետ հանդիպմանը, կազմակերպել լուսաբանում:
2. Շարունակել ապահովել ներքուհական և արտահամալսարանական իրադարձությունների լուսաբանումը:
3. Հետևել ԳՊՀ դասամատյանների պատշաճ լրացման ընթացքին:
4. Հետևողական լինել ուսման վարձերի՝ սահմանված ժամկետներում վճարման ընթացքին:
5. Շարունակել դպրոց-բուհ համագործակցության շրջանակում մարզի դպրոցներ կատարվող այցելությունները և ԳՊՀ-ում դպրոցականների համար ինտելեկտուալ խաղերի կազմակերպումը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

# Արձանագրություն թիվ 11

Գավառի պետական համալսարանի 2015թ. ապրիլի 9-ի ռեկտորատի ընդլայնված նիստի

## Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության 10-րդ չափորոշիչի քննարկում
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 32 անդամներ:

1. **Լսեցին** – Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:  
/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

2. **Քննարկվեցին** – Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության 10-րդ չափորոշիչի վերաբերյալ հարցեր, որին հաջորդեցին նախապես ձևավորված խմբերում կազմակերպված աշխատանքային քննարկումները, համապատասխան չափորոշիչի գծով բուհի թույլ և ուժեղ կողմերի, ներքին վտանգների և արտաքին հնարավորությունների /SWOT/ վերլուծությունների կատարումը:

3. **Ընթացիկ հարցեր:**

- 3.1. **Քննարկվեցին** – Գավառի պետական համալսարանի ֆինանսական կայունության ապահովման կառուցակարգերի վերաբերյալ հարցեր:

- 3.2. **Լսեցին** - Ուսանողների շրջանում ընթերցանության խրախուսման ծրագրի մասին:  
/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին տվյալ ամսվա ընթացքում ուսանողների կողմից ընթերցված գրքերի և դրանց շրջանակում կազմակերպված քննարկումների ժամանակացույցերը:

- 3.3. **Լսեցին** - Հայոց Յեղասպանության 100-ամյա տարելիցի շրջանակում կազմակերպված դասախոսության մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Հայոց Յեղասպանության 100-ամյա տարելիցի շրջանակում Գավառի պետական համալսարանի ուսանողների համար ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի Նորթրիջ համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս, ծագումով մուսալեռցի Վահրամ Շամսայանի կողմից կարդացած դասախոսության վերաբերյալ մանրամասներ:

## Որոշեցին.

1. Հետևել ԳՊՀ դասամատյանների լրացման ընթացքին:
2. Համաձայն նիստի օրակարգի ընթացիկ հարցերի 3.1 ենթակետի՝ ֆակուլտետներում շարունակել գրքի քննարկումները:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան

## Արձանագրություն թիվ 12

Գավառի պետական համալսարանի 2015թ. ապրիլի 10-ի ռեկտորատի ընդլայնված նիստի

### Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության 3-րդ չափորոշիչի քննարկում
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 26 անդամներ:

#### 1. **Լսեցին** – Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

**2. Զննարկվեցին** – Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության 3-րդ չափորոշիչի վերաբերյալ հարցեր, որին հաջորդեցին նախապես ձևավորված խմբերում կազմակերպված աշխատանքային քննարկումները, համապատասխան չափորոշիչի գծով բուհի թույլ և ուժեղ կողմերի, ներքին վտանգների և արտաքին հնարավորությունների /SWOT/ վերլուծությունների կատարումը:

#### 3. **Ընթացիկ հարցեր:**

**3.1. Զննարկվեցին** - Եվրոպական Միության «Հորիզոն-2020» և «Էրազմուս+» ծրագրերի շրջանակում ԳՊՀ ֆակուլտետների ղեկանների և կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկները:

#### **3.2. Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ֆակուլտետներում ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**3.3. Լսեցին** - Արդի աշխարհում տեղեկատվական համակարգերի ունեցած դերակատարությանը նվիրված ներֆակուլտետային գիտաժողովի մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ղեկան Մ. Պ. Ավագյան/

Ներկայացվեց Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ղեկանատի և Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպված գիտաժողովի վերաբերյալ տեղեկատվություն, որը նվիրված էր արդի աշխարհում տեղեկատվական համակարգերի ունեցած դերակատարությանը: Նշվեց, որ ԳՊՀ Կենսաբանության բաժնի 3-րդ, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 1-ին, նույն բաժնի 3-րդ, Դեղագործական քիմիա բաժնի 2-րդ, Սերվիս բաժնի 2-րդ կուրսերի ուսանողները բովանդակալից շնորհանդեսների և տեսանյութերի ձևով ներկայացրին զեկուցումներ՝ ժամանակակից բժշկության, դեղագործության, զբոսաշրջության և սերվիսի ոլորտներում տեղեկատվական համակարգերի ներդրման, նորագույն տեխնոլոգիաների կիրառման և նորարարությունների վերաբերյալ:

#### **Որոշեցին.**

1. Հետևել ԳՊՀ դասամատյանների լրացման ընթացքին:
2. Անցկացնել դասալսումներ ԳՊՀ բոլոր ֆակուլտետներում և քննարկել արդյունքները:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

# Արձանագրություն թիվ 13

Գավառի պետական համալսարանի 2015թ. ապրիլի 11-ի ռեկտորատի նիստի

## Օրակարգ

6. Տեղեկացնել ԳՊՀ աշխատակազմին «Գեղամա» հեռուստաընկերությամբ ս. թ. հունիսի 13-ին՝ ժամը 19:30-ին, «Համալսարանական ժամ» հաղորդաշարի շրջանակում ս.թ. հունիսի 10-ին Գավառի պետական համալսարանում կայացած Եվրոպական Միության «TEMPUS.LeAGUe-Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի հերթական աշխատաժողովի վերաբերյալ տեսանյութի ցուցադրման մասին:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 26

Գավառի պետական համալսարանի 2015թ. հունիսի 27-ի ռեկտորատի ընդլայնված նիստի

### Օրակարգ

1. ԳՊՀ-ում կայացած Եվրոպական Միության «TEMPUS.LAMANCHE» ծրագրի ազգային կոնֆերանսի վերաբերյալ
2. Եվրոպական Միության «Erasmus Mundus. Humeria» ծրագրի շրջանակում Էստոնիայի Տալինի համալսարանում վերապատրաստման վերաբերյալ շնորհանդես հաշվետվության ներկայացում /Ձեկ.՝ ԳՊՀ դասախոս Ռ. Ռ. Սարգսյան/
3. Բարձրագույն մասնագիտությունների կրթական ծրագրերի նոր ցանկի քննարկում
4. Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում
5. Բնագիտության ընթացքը առկա ուսուցման ֆակուլտետներում
6. 2015-2016 ուսումնական տարվա նախապատրաստման ընթացքի մասին
7. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
8. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 24 անդամներ:

Մինչ նիստի օրակարգային հարցերին անցնելը, ԳՊՀ ռեկտոր տիկին Ռուզաննա Հակոբյանը շնորհավորեց ԳՊՀ աշխատակիցներ, ՀՀ Երկրապահ կամավորականների միության անդամ, ազատամարտիկ Ռուբիկ Խաչատրյանին, ՀՀ ԵԿՄ Գավառի երիտասարդ երկրապահների տարածքային բաժանմունքի նախագահ, ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակից Գնել Գևորգյանին՝ ՀՀ Երկրապահ կամավորականների միության վարչության նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի հրամանով «Հայաստանի երկրապահ» հուշամեդալներին արժանանալու համար:

**1. Լսեցին** - ԳՊՀ-ում կայացած Եվրոպական Միության «TEMPUS.LAMANCHE» ծրագրի ազգային կոնֆերանսի վերաբերյալ:

/Ձեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց ս.թ. հունիսի 19-ին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում մեկնարկած և հունիսի 20-ին Գավառի պետական համալսարանում շարունակված Եվրոպական Միության «TEMPUS. LaMANCHE - Բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնում և կառավարում» ծրագրի ազգային կոնֆերանսի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ կոնֆերանսին ներկա էին գործընկերներ Հայաստանից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, Հունաստանից, Պորտուգալիայից և Մեծ Բրիտանիայից, ովքեր համախմբվել էին՝ քննարկելու բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների նախաձեռնման և կառավարման վերաբերյալ հարցեր: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում կոնֆերանսին մասնակցել են Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտորներ Նելլի Կուտուզյանը և Արսեն Ապրոյանը, բուհի ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը, հիշյալ վարչության մեթոդիստ Լիլիթ Թոռչյանը, ԱԶՎ ՈԱԲ մասնագետ Արմինե Գրիգորյանը, ԳՊՀ ուսանողական խորհրդի փոխնախագահ Արեգ Սինանյանը: Հունիսի 20-ին աշխատաժողովի օրակարգի համաձայն՝ ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը, Հայաստանի ազգային ճարտարագիտական համալսարանի պատվիրակ Արուսյակ Աբրահամյանը ներկայացրին համապատասխանաբար «Գավառի պետական համալսարանում փոփոխությունների նախաձեռնում և կառավարում», «Ուսանողների կառավարում և ինքնակառավարում», «Բուհերի և ոչ առևտրային ու հասարակական կազմակերպությունների, մասնավոր սեկտորի միջև համագործակցության հիմնախնդիրները կրթության միջազգայնացման պայմաններում» թեմաներով շնորհանդես-զեկուցումներ, որոնց հաջորդեց բովանդակալից քննարկում:

**2. Լսեցին** - Եվրոպական Միության «Erasmus Mundus. Humeria» ծրագրի շրջանակում Էստոնիայի Տալինի համալսարանում վերապատրաստման վերաբերյալ շնորհանդես հաշվետվությունը:

/Ձեկ.՝ ԳՊՀ դասախոս Ռ. Ռ. Սարգսյան/

Բովանդակալից շնորհանդեսի միջոցով զեկուցողը ներկայացրեց Եվրոպական Միության «Erasmus Mundus. Humeria» ծրագրի շրջանակում ս. թ. ապրիլի 19-ից մայիսի 3-ը Էստոնիայի Տալինի համալսարանում անցած վերապատրաստման արդյունքները:

**3. Քննարկվեցին** - Բարձրագույն մասնագիտությունների կրթական ծրագրերի նոր ցանկի վերաբերյալ հարցեր:

**4. Լսեցին** - Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեց Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողների հաճախումների վերահսկման, անհատական աշխատանքների և միջանկյալ քննությունների, ներքուհական տեղափոխությունների կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն:

**5. Լսեցին** - Քննաշրջանի ընթացքը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ստուգաքննությունների ու քննությունների կազմակերպման ընթացքը, մասնակցած ուսանողների քանակը, առաջադիմության արդյունքները:

**6. Քննարկվեցին** - 2015-2016 ուսումնական տարվա նախապատրաստման, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների լրամշակման, դասախոսացման, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման E-Learning GSU համակարգի բարելավման ընթացքի վերաբերյալ հարցեր:

**7. Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ֆակուլտետներում ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**8. Ընթացիկ հարցեր:**

**8.1. Լսեցին** – Եվրոպական Միության «TEMPUS. ARMENQA» ծրագրի հերթական աշխատաժողովի մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեց ս. թ. հունիսի 21-ից 25-ը Ծվեդիայի Լինշոպինգի համալսարանում տեղի ունեցած Եվրոպական Միության «TEMPUS. ARMENQA - Ազգային և ոլորտային որակավորումների շրջանակների իրականացում Հայաստանում (ճանաչում ազգային և միջազգային աշխատանքային շուկայում)» ծրագրի երրորդ աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ հանդիպմանը մասնակցում էին պատվիրակներ Հայաստանից, Ծվեդիայից, Գերմանիայից, Բելգիայից և Դանիայից: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցում էին պրոռեկտորներ Նելլի Կուտուզյանը, Արսեն Ապրոյանը և բուհի ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

**8.2. Լսեցին** - ԵՄ «Twinning» ծրագրի հերթական աշխատանքային հանդիպման վերաբերյալ:

/Չեկ.՝ Ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդիստ Լ. Գ. Թոռչյան, ԳՊՀ Որակի ապահովման բաժնի մասնագետ Ա. Պ. Գրիգորյան/

Ներկայացվեցին Եվրոպական Միության «Twinning-Հայաստանի բարձրագույն կրթության հզորացում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» ծրագրի հերթական աշխատանքային հանդիպման վերաբերյալ մանրամասներ:

**8.3. Լսեցին** - 2015-2016 ուսումնական տարվա Հայ կրթական հիմնարկության կրթաթոշակային ծրագրի ավարտի մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Հայ կրթական հիմնարկության կողմից հայտարարված կրթաթոշակների տրամադրման մրցույթի վերաբերյալ մանրամասներ, նշվեց, որ մրցույթին հայտ են ներկայացրել ԳՊՀ 19 ուսանող:

**8.4. Լսեցին** – Հայ օգնության ֆոնդի կողմից կազմակերպվող «Ծիրանահավաք» բարեգործական միջոցառման մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց ս. թ. հունիսի 27-ից հուլիսի 3-ը Հայ օգնության ֆոնդի կողմից կազմակերպվող «Ծիրանահավաք» բարեգործական միջոցառման վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ նախաձեռնության շրջանակում «Ժիրայր Նիշանյան» կրթավճար ծրագրում ընդգրկված ԳՊՀ 4 ուսանող մեկնել են Արաքսի ավին գտնվող Երվանդաշատ գյուղ՝ մասնակցելու ծիրանի բերքահավաքին:

**8.5. Լսեցին** – «Համաքուհական բանակում - 2015» նախաձեռնության մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին ս. թ. օգոստոսի 2-8-ը Երևանի պետական համալսարանի նախաձեռնությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղթութի շրջանի Տոդ գյուղում կազմակերպվող համաբուհական բանակումի վերաբերյալ մանրամասներ: Նշվեց, որ հավաքին մասնակցելու իրավունք են ստացել ՀՀ 12 բուհերի ուսանողներ, ինչպես նաև ջոկատներ Արցախից և Ջավախքից: Գավառի պետական համալսարանից կմասնակցեն 5 ուսանող:

8.6. **Լսեցին** – «Բազե-2015» համահայկական երիտասարդական հավաքի մասին:

/Ջեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց ս. թ. օգոստոսի 17-ից 23-ը Ծաղկաձոր քաղաքի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հանգստյան տանն անցկացվելիք «Բազե-2015» համահայկական երիտասարդական հավաքին Գավառի պետական համալսարանի ջոկատի կազմման, համապատասխան անվանակարգերում ուսանողների ներգրավման վերաբերյալ մանրամասներ:

### **Որոշեցին.**

1. Սահմանված ժամանակացույցին համապատասխան կազմակերպել առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների դիպլոմների, միջուկների և հավելվածների կազմման և տպագրման աշխատանքները:
2. 2015-2016 ուսումնական տարվա առկա ուսուցման ֆակուլտետների ընդունելության բանավոր քննությունների ժամանակացույցի վերաբերյալ հայտարարությունը տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում:
3. Օրակարգի ընթացիկ հարցերի 8.5 և 8.6 ենթակետերի համաձայն՝ ապահովել ուսանողների մասնակցությունը «Համաբուհական բանակում - 2015» և «Բազե - 2015» ծրագրերին:
4. Հայտարարել մրցույթ՝ «Գեղեցիկ հիշողություններ միջազգային ծրագրերից» խորագրով, համապատասխան հայտարարությունը տեղադրել ԳՊՀ ֆեյսբուքյան էջում: Մրցույթի համաձայն՝ տեղեկացնել եվրոպական առաջատար բուհերում սովորած ուսանողներին և գիտահետազոտական աշխատանք կատարած դասախոսներին՝ ԳՊՀ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի ներկայացնելու իրենց ուղևորություններից հետաքրքիր լուսանկարներ և տեսանյութեր, որոնք մեկ ժողովածուով տեղ կգտնեն բուհի ֆեյսբուքյան էջում և քվեարկության միջոցով կմասնակցեն մրցույթին:
5. Աշխատանքներ տանել հաալսարանի ուսանողների հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարբեր միջոցներով, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Երկրապահ կամավորականների միության հետ համագործակցության ծրագրեր իրականացնելով:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 27

Գավառի պետական համալսարանի 2015թ. հուլիսի 4-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Առկա ուսուցման ֆակուլտետներում 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները
2. Հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի ընթացքը
3. 2015-2016 ուսումնական տարվա նախապատրաստման գործընթացը
4. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 9 անդամներ:

**1. Լսեցին** – Առկա ուսուցման ֆակուլտետներում 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ստուգարքների ու քննությունների կազմակերպման ընթացքը, մասնակցած ուսանողների քանակը, առաջադիմության արդյունքները:

**2. Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի ընթացքը:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեց հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի և լուծարային շրջանի կազմակերպման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

**3. Քննարկվեցին** – 2015-2016 ուսումնական տարվա նախապատրաստման գործընթացի վերաբերյալ հարցեր:

**4. Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ֆակուլտետներում ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

### 5. Ընթացիկ հարցեր:

**5.1. Քննարկվեց** – ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Աշխարհագրության ամբիոնի լուծարման, ԳՊՀ Ռուսաց լեզվի և գրականության և Օտար լեզուների ամբիոնները միացման ձևով Օտար լեզուների ամբիոնի վերակազմակերպման առաջարկները ԳՊՀ գիտական խորհրդին ներկայացնելու հարցը:

**5.2. Քննարկվեցին** – Համաշխարհային բանկի իրականացրած ծրագրին համապատասխան՝ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Մանկավարժության և մեթոդիկայի բաժնի 3-րդ, նույն բաժնի մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսումնական պլաններում «Մոլորողների գիտելիքների ստուգում և գնահատում» մոդուլը ներդնելու վերաբերյալ հարցեր:

**5.3. Լսեցին** – ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողների արտադրական պրակտիկայի մեկնարկի վերաբերյալ:

/Չեկ.՝ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ղեկան Մ. Պ. Ավագյան/

Ներկայացվեց Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողների՝ ԳՊՀ դասախոս Մաքսիմ Հակոբյանի ղեկավարությամբ, արտադրական պրակտիկայի ժամանակացույցի համաձայն՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոընդունիչ ցանց»-ի Գեղարքունիքի տարածքային բաժին կատարած գիտաճանաչողական այցի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ արտադրական պրակտիկայի շրջանակում ապագա ճարտարագետները կլինեն նաև մասնագիտական այլ կառույցներում:

**5.4. Լսեցին** – «Ժիրայր Նիշանյան» կրթավճար ծրագրում ընդգրկված կրթաթոշակառուների մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց «Ժիրայր Նիշանյան» կրթավճար ծրագրի շրջանակում 2015-2016 ուսումնական տարվա համար հայտարարված մրցույթի արդյունքների և վերահաստատումների վերաբերյալ տեղեկատվություն:

## Որոշեցին.

1. Վերանայել առարկայական ծրագրերը և ուսումնական պլանները, կատարել անհրաժեշտ փոփոխություններ, զեկուցագրով ներկայացնել առաջարկություններ:
2. Ելնելով Համաշխարհային բանկի միջոցներով, Կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակում կազմակերպված վերապատրաստումների արյունքներից՝ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Մանկավարժության և մեթոդիկայի բաժնի 3-րդ, նույն բաժնի մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսումնական պլաններում ներդնել «Սովորողների գիտելիքների ստուգում և գնահատում» մոդուլը:
3. Ներկայացնել զեկուցագիր՝ համապատասխան ֆակուլտետներում ըստ բաժինների դասամատյանների պահանջված թվաքանակի վերաբերյալ՝ գնման գործընթացը պատշաճ կազմակերպելու համար:
4. Ներկայացնել զեկուցագիր՝ համապատասխան ֆակուլտետներում ըստ բաժինների և կուրսերի ուսանողների փոխադրումների վերաբերյալ:
5. Օրակարգի ընթացիկ հարցերի 5.1 ենթակետի համաձայն՝ հարցը նախապատրաստել ԳՊՀ գիտական խորհրդի քննարկմանը:
6. Օրակարգի ընթացիկ հարցերի 5.3 ենթակետի համաձայն՝ ապահովել ուսանողների ակտիվ մասնակցությունը պրակտիկայի գործընթացին:
7. Ըստ ֆակուլտետների՝ պատրաստել նամակներ քննաշրջանին չմասնակցած և դասերին պատշաճ չհաճախած ուսանողների ընտանիքներին՝ ծանուցելով նրանց ստեղծված իրավիճակի մասին:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան

## Արձանագրություն թիվ 28

Գավառի պետական համալսարանի 2015թ. օգոստոսի 19-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Մագիստրատուրայի ընդունելություն
2. 2015-2016 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի նախապատրաստական աշխատանքները առկա ուսուցման համակարգում
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 9 անդամներ:

**1. Կատարվեց** – 2015-2016 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելություն:

**2. Լսեցին** - 2015-2016 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի նախապատրաստական աշխատանքները առկա ուսուցման համակարգում:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին դասացուցակների, ուսումնական պլանների կազմման, դրանք 16 և 4 շաբաթյա աշխատանքային ժամանակացույցին համապատասխանեցման, դասախոսների և դասավանդող համապատասխան առարկաների հստակեցման վերաբերյալ մանրամասներ:

**3. Ընթացիկ հարցեր:**

**3.1. Քննարկվեցին** – Ս. ք. օգոստոսի 30-ին ԳՊՀ առաջին կուրսեցիների և նրանց ծնողների հետ հանդիպման կազմակերպման վերաբերյալ մանրամասներ:

**3.2. Քննարկվեցին** – Փարոս» համակարգում ընտանիքների անապահովության սահմանային միավորից՝ 30-ից բարձր միավորներ ունեցող և միջին որակական գնահատականի (ՄՈԳ) նվազագույն շեմը հաղթահարած ուսանողների տվյալների բազա ստեղծելու մասին հարցեր:

**3.3. Քննարկվեցին** – Ուսումնական պլաններում համապատասխան փոփոխությունների կատարման վերաբերյալ հարցեր:

**3.4. Լսեցին** – Հայ կրթական հիմնարկության (ՀԿՀ-ի) կողմից 2015-2016 ուսումնական տարվա համար հայտարարված կրթաթոշակային մրցույթի արդյունքների մասին:

/Զեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Հայ կրթական հիմնարկության (ՀԿՀ-ի) կողմից 2015-2016 ուսումնական տարվա համար հայտարարված կրթաթոշակային մրցույթի արդյունքները: Նշվեց, որ հիմնարկության կողմից կրթաթոշակները տրամադրվում են ընթացիկ ուսումնական տարվա վարձավճարի չափով՝ բարձր առաջադիմություն ցուցաբերած և սոցիալապես անապահով այն ուսանողներին, ովքեր սովորում են ՀԿՀ-ի կողմից ֆինանսավորվող մասնագիտություններով: Մրցույթին մասնակցելու իրավունք ունեին Հայաստանի Հանրապետության պետական բուհերի բակալավրիատի վճարովի համակարգում սովորող 2-րդ և բարձր կուրսերի ուսանողներ, ինչպես նաև մագիստրոսներ և ասպիրանտներ:

Գավառի պետական համալսարանից մրցույթին մասնակցության հայտ էր ներկայացրել 20 ուսանող:

Անցկացված 2 փուլերի արդյունքում Գավառի պետական համալսարանից հաղթող էին ճանաչվել ներքոհիշյալ ուսանողները.

*Մարգուշ Արևշատյան*՝ Բնագիտական ֆակուլտետ, Կենսաբանություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրս,

*Հասմիկ Թադևոսյան*՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, Պատմություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրս,

*Միմա Գասպարյան*՝ Բնասիրական ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրս,

*Լիլիթ Փոստոյան*՝ Բնագիտական ֆակուլտետ, Կենսաբանություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրս:

**Որոշեցին.**

1. Տեղեկացնել ԳՊՀ աշխատակազմին ս. ք. օգոստոսի 25-ին Գավառի պետական համալսարանում կայանալիք ՀՀ Կրթության և գիտության նախարար պարոն Արմեն Աշոտյանի հետ հանդիպման մասին:
2. Ս.ք. օգոստոսի 28-ին հրավիրել ԳՊՀ գիտական խորհրդի նիստ:



3. Վերանայել ուսումնական տարվա պլանները, առարկայական ծրագրերը, ներկայացնել հաստատման:
4. 2015-2016 ուսումնական տարվա ԳՊՀ հեռակա ուսուցման համակարգի ընդունելությունը կազմակերպել սահմանված կարգով:
5. Հստակեցնել դասացուցակները և տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում:
6. ԳՊՀ առաջին կուրսեցու ուղեցույցը տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում:
7. «Փարոս» համակարգում ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող և միջին որակական գնահատականի (ՄՈԳ) նվազագույն շեմը հաղթահարած ուսանողների տվյալները ներկայացնել ՀՀ ԿԳՆ-ին:
8. Կազմակերպել մատյանների, ստուգման գրքույկների, ուսանողական տոմսերի գնման գործընթացը:
9. Կազմակերպել Գ-րի և դպրության օրվան մվիրված տոնական միջոցառում:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան

## Արձանագրություն թիվ 29

Գավառի պետական համալսարանի 2015թ. օգոստոսի 27-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. 2015-2016 ուսումնական տարվա I-ին կիսամյակի նախապատրաստման գործընթացի մասին
2. Ընթացիկ հարցեր

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 13 անդամներ:

Մինչ նիստի օրակարգային հարցերին անցնելը, ԳՊՀ ռեկտոր տիկին Ռուզաննա Հակոբյանը նիստի անդամներին ներկայացրեց ս. թ. օգոստոսի 26-ին ՀՀ ԿԳ նախարարի մոտ կայացած խորհրդակցության արդյունքները:

**1. Զննարկվեցին** – 2015-2016 ուսումնական տարվա I-ին կիսամյակի նախապատրաստման գործընթացի, առկա ուսուցման ֆակուլտետներում համապատասխան կուրսերի դասացուցակների, լսարանների հստակեցման վերաբերյալ հարցեր:

#### 2. Ընթացիկ հարցեր:

**2.1. Զննարկվեցին** – «Փարոս» համակարգում ընդգրկված, սոցիալական անապահովության սահմանային (30) միավորից բարձր միավոր և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման ծրագրի, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման և ՀՀ ԿԳՆ ուղարկելու մասին հարցեր:

**2.2. Լսեցին** – Հարցաթերթիկների արդյունքների համալիր էլեկտրոնային վերլուծության համակարգի մշակման մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին առաջին կուրսեցիների հարցաթերթիկների արդյունքների համալիր էլեկտրոնային վերլուծության համակարգի մշակման վերաբերյալ մանրամասներ:

**2.3. Լսեցին** – «Բազե-2015» համահայկական երիտասարդական հավաքի մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին ս. թ. օգոստոսի 17-ից 23-ը Ծաղկաձոր քաղաքի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հանգստյան տանն անցկացված «Բազե-2015» համահայկական երիտասարդական հավաքին Գավառի պետական համալսարանի թիմի մասնակցության վերաբերյալ մանրամասներ:

**2.4. Լսեցին** – «Համաբուհական բանակում – 2015»-ին Գավառի պետական համալսարանի թիմի մասնակցության մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին ս. թ. օգոստոսի 14-ից 20-ը կայացած «Համաբուհական բանակում – 2015»-ին Գավառի պետական համալսարանի թիմի մասնակցության վերաբերյալ մանրամասներ, նշվեց, որ բուհից բանակումին մասնակցել են Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Շահանե Գրիգորյանը, նույն բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գևորգ Մերոբյանը, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Վլադիմիր Ղասաբօղյանը, Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Հովեյանը, Ֆինանսների բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Վարդան Գարեյանը:

#### Որոշեցին.

1. Սահմանված կարգով կազմել «Փարոս» համակարգում ընդգրկված, սոցիալական անապահովության սահմանային (30) միավորից բարձր միավոր և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ցուցակը և ըստ ֆակուլտետների՝ զեկուցագրով ներկայացնել ԳՊՀ ռեկտորատ:
2. Առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող և համապատասխան արտոնություններից օգտվող ուսանողներից ուսման վարձի զեղչի դիմումները և «Փարոս» համակարգում 30-ից ավելի միավոր ունենալու տեղեկանքներն ընդունել մինչև սեպտեմբերի 18-ը՝ ներառյալ՝ այդ մասին տեղեկացնելով ուսանողներին:
3. Տեղեկացնել 1-ին կուրսի ուսանողներին ուսման վարձը վճարել մինչև ս.թ. օգոստոսի 30-ը: Հստակեցնել սահմանամերձ և սահմանապահ գյուղերի բնակիչ ԳՊՀ ուսանողների անունները և ՀՀ ԿԳՆ հրամանով սահմանված կարգով կիրառել ուսման վարձի զեղչ՝ համապատասխանաբար 10% առաջին և 20% 2-րդ և բարձր կուրսերի ուսանողների համար:

4. Ապահովել բուհի բոլոր դասախոսների կողմից ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «E-learning-GSU» համակարգի առարկայական տիրույթներում համապատասխան տեղեկատվության լրամշակումը և համալրումը:
5. Շարունակել համագործակցությունը դպրոցների հետ:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

# Արձանագրություն թիվ 30

Գավառի պետական համալսարանի 2015թ. սեպտեմբերի 3-ի ռեկտորատի նիստի

## Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Քննաշրջանի նախապատրաստման ընթացքը հեռակա ուսուցման ֆակուլտետում
3. 2014-2015 ուսումնական տարվա արդյունքներով անվճար և վճարովի տեղերում սովորող ուսանողների փոխատեղման (ռոտացիայի) մասին
4. Սոցիալական անապահովության սահմանային (30) միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների ուսանողներին փոխհատուցում տրամադրելու գործընթացի նախապատրաստման մասին
5. ԳՊՀ ուսանողների ուսումնական և ֆինանսական կարգապահության բարձրացման մասին
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 14 անդամներ:

**1. Լսեցին** - Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին համապատասխան ֆակուլտետներում կուրսերի տեղաբաշխման, դասացուցակների հստակեցման, ուսանողներին ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «E-Learning GSU» համակարգի մուտքաբառերի և գաղտնաբառերի տրամադրման, ուսանողների հաճախումների վերահսկման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

**2. Լսեցին** - Քննաշրջանի նախապատրաստման ընթացքը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի և լուծարային շրջանի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

**3. Քննարկվեցին** – 2014-2015 ուսումնական տարվա արդյունքներով անվճար և վճարովի տեղերում սովորող ուսանողների փոխատեղման (ռոտացիայի) մրցույթի կազմակերպման սկզբունքների, հնարավոր հավակնորդների վերաբերյալ հարցեր:

**4. Քննարկվեցին** – «Փարոս» համակարգում ընդգրկված, սոցիալական անապահովության սահմանային (30) միավորից բարձր միավոր և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման ծրագրի, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման և ՀՀ ԿԳՆ ներկայացնելու մասին հարցեր:

**5. Քննարկվեցին** – ԳՊՀ ուսանողների ուսումնական և ֆինանսական կարգապահության բարձրացման մասին հարցեր:

**6. Ընթացիկ հարցեր:**

**6.1. Քննարկվեցին** - ԳՊՀ Եվրոպական Միության միջազգային ծրագրով արտերկրի բուհերում սովորած և վերադարձած ուսանողների ուսումնասիրած առարկաներին տրված կրեդիտների հաշվառման, անհրաժեշտության դեպքում առարկայական տարբերությունների կազմակերպման, համապատասխան կուրսերում հրամանագրման վերաբերյալ հարցեր:

**6.2. Լսեցին** - Դիլիջանում կայացած ԵՄ «Տեմպուս» ծրագրերի աշխատաժողովի մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեցին ս. թ. օգոստոսի 29-ից 30-ը Հանրային քաղաքականության ինստիտուտի նախաձեռնությամբ Դիլիջանում տեղի ունեցած «Հայաստանում և Վրաստանում Եվրոպական Միության «Տեմպուս» ծրագրերի որակական ազդեցությունը» խորագրով աշխատաժողովի վերաբերյալ մանրամասներ, նշվեց, որ հանդիպմանը մասնակցեցին Գավառի պետական համալսարանի Ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդիստներ Լիլիթ Թոռչյանը և Կարինե Մարուխյանը, ովքեր ներկայացրին ԳՊՀ փորձը:

**6.3. Լսեցին** - ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերի նոր փուլերի մեկնարկի մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձը մասամբ կամ լրիվ փոխհատուցող կրթական հիմնադրամների և կրթաթոշակային ծրագրերի նոր փուլերի մեկնարկի վերաբերյալ մանրամասներ:

## Որոշեցին.

1. Օրակարգի 3-րդ կետի համաձայն՝ մանդատային հանձնաժողովին ներկայացնել ֆակուլտետներում կազմակերպված փոխատեղումների մրցույթի արդյունքները:
2. Օրակարգի ընթացիկ հարցերի 6.3 ենթակետի համաձայն՝ սահմանված կարգով հավաքագրել ծրագրերում ընդգրկված և նոր ուսումնական տարում դիմումատու ուսանողների փաստաթղթերը:
3. Վերլուծել առաջին կուրսեցիների կողմից լրացված հարցաթերթիկների թղթային և էլեկտրոնային տարբերակները և արդյունքները ներկայացնել Որակի ապահովման բաժին:
4. Սահմանված կարգով շարունակել հավաքագրել «Փարոս» համակարգում ընդգրկված, սոցիալական անապահովության սահմանային (30) միավորից բարձր միավոր և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների տեղեկանքներն մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ:
5. Հայ կրթական հիմնարկության կրթավճարի ծրագրում ընդգրկված 12 ուսանողի ուսման վարձավճարի փոխանցման համար նախատեսված հաշիվ-անդորրագրերը ներկայացնել ՀԿՀ կենտրոնական գրասենյակ:
6. Շարունակել 2015-2016 ուսումնական տարվա ԳՊՀ հեռակա ուսուցման համակարգի ընդունելությունը, համապատասխան հայտարարության տեքստը եթեր հեռարձակել «Գեղամա» հեռուստաընկերությամբ:
7. Ս. թ. սեպտեմբերի 25-ից սկսած՝ կազմակերպել արտերկրում ուսանած և վերադարձած ԳՊՀ ուսանողների շնորհանդես-հաշվետվությունները: Համապատասխանաբար տեղեկացնել ԳՊՀ աշխատակազմին և ուսանողներին՝ ներկա գտնվելու հիշյալ հանդիպումներին: Շնորհանդեսները տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում և ուսանողական պորտալում:
8. Ավարտուն տեսքի բերել մագիստրատուրայի համապատասխան կուրսերի դասացուցակները և տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում:
9. Գավառի պետական համալսարանում կազմակերպել անզլերեն լեզվի դասընթացների հերթական փուլը, քայլեր ձեռնարկել խմբերի հավաքագրման, ծրագրի իրականացման ուղղությամբ, հայտարարություն տարածել «Գեղամա» հեռուստաընկերությամբ, տեքստը տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:
10. Շարունակել դպրոց-բուհ համագործակցության շրջանակում մարզի դպրոցներ կատարվող այցելությունները և ԳՊՀ-ում դպրոցականների համար ինտելեկտուալ խաղերի, «Բաց դռների» օրերի, ընդունելությունների կազմակերպումը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

# Արձանագրություն թիվ 31

Գավառի պետական համալսարանի 2015թ. սեպտեմբերի 10-ի ռեկտորատի նիստի

## Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Քննաշրջանի ընթացքը հեռակա ուսուցման ֆակուլտետում
3. Եվրոպական Միության Տեմպուս «GOVERN» ծրագրի միջանկյալ արդյունքների և ընթացքի մշտադիտարկման մասին
4. ԳՊՀ ֆակուլտետների, ամբիոնների, կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունների և 2015-2016 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգերի ներկայացման մասին
5. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 13 անդամներ:

### 1. **Լսեցին** - Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսանողների հաճախումների, մագիստրատուրայի դասերի մեկնարկի վերաբերյալ հարցեր:

### 2. **Լսեցին** – Քննաշրջանի ընթացքը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեց հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի և լուծարային շրջանի կազմակերպման և անցկացման վերաբերյալ տեղեկատվություն:

3. **Քննարկվեցին** - Եվրոպական Միության Տեմպուս «GOVERN» ծրագրի միջանկյալ արդյունքների և ընթացքի մշտադիտարկման անցկացման մասին հարցեր:

4. **Լսեցին** – ԳՊՀ ֆակուլտետների, ամբիոնների, կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունների և 2015-2016 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգերի ներկայացման մասին հարցեր:

### 5. **Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ուսման վարձի պարտքերն ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

### 6. **Ընթացիկ հարցեր:**

6.1. **Քննարկվեցին** - Սոցիալական անապահովության «Փարոս» համակարգում ընդգրկված և 30 միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների երեխա-ուսանողների փաստաթղթերի հավաքագրման ընթացքի շուրջ հարցեր:

### 6.2. **Լսեցին** - «Ժիրայր Նիշանյան» կրթավճար ծրագրում ընդգրկված կրթաթոշակառուների մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց «Ժիրայր Նիշանյան» կրթավճար ծրագրի շրջանակում 2015-2016 ուսումնական տարվա համար հայտարարված մրցույթի և վերահաստատումների արդյունքները, նշվեց, որ նոր ուսումնական տարում ծրագրում ընդգրկվել է 21 ուսանող և կրթավճար-ծրագրի շահառուների թիվը դարձել է 78-ը:

6.3. **Լսեցին** – «ՎիվաՍել-USU» ընկերության «Կրթական հիմնադրամ» նախագծի շրջանակում ուսման վարձի փոխհատուցման ծրագրի նոր փուլի մեկնարկի մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց «ՎիվաՍել-USU» ընկերության «Կրթական հիմնադրամ» նախագծի շրջանակում ուսման վարձի փոխհատուցման ծրագրի նոր փուլի մեկնարկի, ծրագրում նոր ուսանողների ընդգրկման, փաստաթղթերի հավաքագրման մասին տեղեկատվություն:

## Որոշեցին.

1. Օրակարգի 4-րդ կետի համաձայն՝ տեղեկացնել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ սահմանված ժամկետներում պատրաստելու և ներկայացնելու 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունները և 2015-2016 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգերը:
2. Կազմել 2014-2015 ուսումնական տարում բուհի ամբիոնների վարիչների գործունեության հաշվետվությունների ներկայացման ժամանակացույց և համապատասխանաբար տեղեկացնել նրանց:
3. Կազմակերպել ԳՊՀ Եվրոպական Միության միջազգային ծրագրով արտերկրի բուհերում սովորած և վերադարձած ուսանողների շնորհանդես-հաշվետվությունների ներկայացումը, ապահովել ԳՊՀ պաշտոնական կայքում դրանց լուսաբանումը:
4. Շարունակել դպրոց-բուհ համագործակցության շրջանակում փոխայցելությունները Գավառի պետական համալսարան և մարզի դպրոցներ:
5. Բուհի ուսանողական ինքնակառավարման մարմիններին հանձնարարել կազմակերպել «Բարև, ես եմ» խորագրով ցերեկույթ:
6. Աշխատանքներ իրականացնել ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունների կազմակերպման ուղղությամբ:
7. Տեղեկացնել ուսանողներին ս. թ. հոկտեմբերի 10-ին կայանալիք կարճամետրաժ ֆիլմերի ցուցադրության մասին և ապահովել նրանց մասնակցությունը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 32

Գավառի պետական համալսարանի 2015թ. սեպտեմբերի 19-ի ռեկտորատի ընդլայնված նիստի

### Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Քննաշրջանի ընթացքը հեռակա ուսուցման ֆակուլտետում
3. Եվրոպական Միության Տեմպուս «VERITAS» ծրագրի միջանկյալ արդյունքների ներկայացում (Ձեկ. Ն. Կուտուզյան)
4. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 25 անդամներ:

#### 1. **Լսեցին** - Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեց ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսանողների հաճախումների և ընթացիկ լուծարային շրջանի վերաբերյալ տեղեկատվություն:

#### 2. **Լսեցին** – Քննաշրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Ձեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին հեռակա ուսուցման ֆակուլտետում քննական ժամանակացույցին համապատասխան՝ քննաշրջանի կազմակերպման և անցկացման վերաբերյալ հարցեր:

**3. Լսեցին** – Եվրոպական Միության Տեմպուս «VERITAS» ծրագրի միջանկյալ արդյունքների ներկայացում:

/Ձեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Բանախոսը «Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կառուցվածքային զարգացում՝ Չայբուրգի սկզբունքների հիման վրա» թեմայի շրջանակում լսարանին ներկայացրեց ծրագրի նպատակներն ու խնդիրները, գործընկեր հաստատությունները, անդրադարձավ ծրագրի համացանցային հարթակում ներկայացվածությանը, մեկնաբանեց զայբուրգյան 10 սկզբունքները, գիտական աստիճանաշնորհման չափանիշները, որակի ապահովման կառուցակարգերը, մատնանշեց նաև զայբուրգյան սկզբունքները՝ Հայաստանի բարձրագույն կրթության 3-րդ աստիճանում տեղայնացման մարտահրավերներն ու հիմնախնդիրները, կարևորեց եվրոպական բուհերի հետ միջհամալսարանական համագործակցությունն ու մասնակցությունը համատեղ ասպիրանտական՝ երկակի դիպլոմների շնորհման ծրագրերին:

#### 4. **Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ուսման վարձի պարտքերն ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

#### 5. **Ընթացիկ հարցեր:**

**5.1. Քննարկվեցին** - ԳՊՀ ամբիոնի վարիչների կողմից համապատասխան ամբիոնների՝ 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունների և զարգացման հայեցակարգերի ներկայացման ժամանակացույցի հստակեցման վերաբերյալ հարցեր:

#### 5.2. **Լսեցին** – «ԱՄՔՈՐ» հասարակական կազմակերպության կրթաթոշակային մրցույթի մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին «ԱՄՔՈՐ» հասարակական կազմակերպության կողմից հայտարարված կրթաթոշակային մրցույթի արդյունքները, նշվեց, որ ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի 25 ուսանողների ուսման վարձը մասամբ կփոխհատուցվի ծրագրի շրջանակում:

**5.3. Լսեցին** – Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից հայտարարված սոցիալական աջակցության նոր ծրագրի մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից հայտարարված սոցիալական աջակցության նոր ծրագրի մասին, համաձայն որի ՀՀ պետական բուհերի առկա ուսուցման համակարգի բակալավրիատում սովորող երկու և ավելի երեխա ունեցող ուսանողների ուսման վարձն ամբողջ ուսումնառության ընթացքում փոխհատուցելու կփոխհատուցվի:



**5.4. Լսեցին** – «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերության «Կրթական հիմնադրամ» նախագծի շրջանակում ուսման վարձի փոխհատուցման ծրագրի նոր փուլի մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերության «Կրթական հիմնադրամ» նախագծի շրջանակում ուսման վարձի փոխհատուցման ծրագրի նոր փուլի մեկնարկի, ծրագրում նոր ուսանողների ընդգրկման, փաստաթղթային փաթեթների հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

#### **Որոշեցին.**

1. Իրագեկել ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին՝ սահմանված կարգով ներկայացնելու 2014-2015 ուսումնական տարվա հաշվետվությունները և գործողությունների ծրագրերը:
2. ԳՊՀ համապատասխան կանոնակարգի համաձայն՝ մերժել այն ուսանողների ուսման վարձի գեղչի դիմումները, ում ՄՈԳ-ը ցածր է բակալավրիատում՝ 3.0, մագիստրատուրայում՝ 3.2-ից:
3. Օրակարգի ընթացիկ հարցերի 5.3 ենթակետի համաձայն՝ համապատասխան հայտարարությունը տեղադրել ԳՊՀ ֆեյսբուքյան էջում և ապահովել համապատասխան ուսանողների մասնակցությունը:
4. Օրակարգի ընթացիկ հարցերի 5.4 ենթակետի համաձայն՝ «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերության «Կրթական հիմնադրամ» նախագծի շրջանակում ուսանողների փաստաթղթային փաթեթները հավաքագրել մինչև ս. ք. սեպտեմբերի 25-ը և «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերություն:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան

## Արձանագրություն թիվ 33

Գավառի պետական համալսարանի 2015թ. սեպտեմբերի 24-ի նեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Եվրոպական Միության «TEMPUS.ATHENA» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովի մասին
2. Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում
3. Քննաշրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
4. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ նեկտորատի 14 անդամներ:

1. **Լսեցին** - Եվրոպական Միության «TEMPUS.ATHENA» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովի մասին:  
/Չեկ.՝ ԳՊՀ նեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց ս.թ. սեպտեմբերի 15-ից 17-ը Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում կայացած Եվրոպական Միության «TEMPUS-ATHENA» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ ծրագիրը նպատակաուղղված էր Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում բուհական ինքնավարությունը և կայունությունը ապահովող օրենսդրական, վարչական, կազմակերպական փոփոխությունների խրախուսմանը, համապատասխան ճանապարհային քարտեզի մշակմանը և առաջարկմանը: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին բուհի նեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը:

2. **Լսեցին** – Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում:  
/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին քննաշրջանի և լուծարային շրջանի ժամանակացույցերը, կազմակերպման և անցկացման ընթացքը:

3. **Լսեցին** – Քննաշրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:  
/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի և լուծարային շրջանի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

4. **Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:  
/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ուսման վարձի պարտքերն ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

### 5. Ընթացիկ հարցեր:

5.1. **Լսեցին** - ԵՄ «Erasmus +» ծրագրի շրջանակում Իտալիայի Պավիայի համալսարանի հետ համագործակցության մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեց Եվրոպական Միության «Erasmus +» ծրագրի շրջանակում Իտալիայի Պավիայի համալսարանի հետ պայմանավորվածության ձեռքբերման, համագործակցության նոր ծրագրի մշակման, դրա ուղղությունների և ոլորտների, ծրագրի ընձեռած հնարավորությունների և սպասելիքների, համագործակից կողմերի վերաբերյալ տեղեկատվություն:

5.2. **Լսեցին** - Եվրոպական Միության «TEMPUS. PACT-Կովկասյան տարածաշրջանում գիտահետազոտական նախագծերի մասնակիցների գիտական ներուժի վերապատրաստում» ծրագրի շրջանակում կայացած վերապատրաստման մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեցին ս. թ. սեպտեմբերի 22-24-ը Եվրոպական Միության «TEMPUS. PACT-Կովկասյան տարածաշրջանում գիտահետազոտական նախագծերի մասնակիցների գիտական ներուժի վերապատրաստում» ծրագրի շրջանակում կայացած հերթական վերապատրաստման վերաբերյալ մանրամասներ:

**5.3. Լսեցին** – Վրաստանում կայացած Եվրոպական Միության «TEMPUS.LAMANICHE» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովի վերաբերյալ:

/Ձեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց ս.թ. սեպտեմբերի 14-18-ը Վրաստանի Հանրապետության Գորիի պետական համալսարանում Եվրոպական Միության «TEMPUS. LaMANICHE - Բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնում և կառավարում» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ հանդիպմանը Գավառի պետական համալսարանից մասնակցել են բուհի ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը, հիշյալ վարչության մեթոդիստ Լիլիթ Թոռչյանը, ովքեր բովանդակալից շնորհանդեսի միջոցով ներկայացրել են ծրագրի շրջանակում ԳՊՀ իրականացրած աշխատանքները:

**5.4. Լսեցին** – «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերության «Կրթական հիմնադրամ» նախագծի շրջանակում ուսման վարձի փոխհատուցման ծրագրի նոր փուլի կազմակերպման մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերության «Կրթական հիմնադրամ» նախագծի շրջանակում ուսման վարձի փոխհատուցման ծրագրի նոր փուլի մեկնարկի, ծրագրում նոր ուսանողների ընդգրկման, փաստաթղթերի հավաքագրման մասին տեղեկատվություն, նշվեց, որ սահմանված ժամկետներում հավաքագրվել և «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերության «Կրթական հիմնադրամ» է ներկայացվել 41 ուսանողի փաստաթղթային փաթեթ և համապատասխանաբար նույնքան էլ հաշիվ-անդորրագիր:

### **Որոշեցին.**

1. Հետևողական աշխատանքներ իրականացնել «Ժիրայր Նիշանյան» կրթավճար ծրագրում ընդգրկված կրթաթոշակառուների հետ՝ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերելու նպատակով:
2. Ս. ք. սեպտեմբերի 25-ին կազմակերպել «Ժիրայր Նիշանյան» կրթավճար ծրագրում ընդգրկված կրթաթոշակառուների և ֆոնդի ներկայացուցիչների հետ հանդիպումը:
3. Ս. ք. սեպտեմբերի 27-ին ապահովել Գավառի պետական համալսարանի ուսանողների մասնակցությունը Էջմիածնում կայանալիք Մյուռնոօրհների արարողությանը:
4. Ս. ք. հոկտեմբերի 3-ին պայմաններ ստեղծել սահմանված կարգով կազմակերպելու ԳՊՀ Ուսանողական խորհրդի նախագահի ընտրություններ:
5. Կազմակերպել ԳՊՀ Եվրոպական Միության միջազգային ծրագրով արտերկրի բուհերում սովորած և վերադարձած ուսանողների շնորհանդես-հաշվետվությունների ներկայացումը, ապահովել ԳՊՀ պաշտոնական կայքում դրա լուսաբանումը:
6. Շարունակել դպրոց-բուհ համագործակցության շրջանակում մարզի դպրոցներ կատարվող այցելությունները:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 34

Գավառի պետական համալսարանի 2015թ. հոկտեմբերի 8-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Քննաշրջանի ընթացքը հեռակա ուսուցման ֆակուլտետում
3. Բուհի հաշմանդամ աշխատակիցների, սովորողների վերաբերյալ ԿԳ նախարարի գրության պատասխանի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ
4. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 10 անդամներ:

1. **Լսեցին** - Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեց ուսանողների հաճախումների, միջանկյալ քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն:

2. **Լսեցին** – Քննաշրջանի ընթացքը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեղան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեց հեռակա ուսուցման ֆակուլտետում 2015թ. 2-րդ կիսամյակի քննությունների, ստուգարքների կազմակերպման և անցկացման ընթացքը:

3. **Քննարկվեցին** - Բուհի հաշմանդամ աշխատակիցների, սովորողների վերաբերյալ ԿԳ նախարարի գրության պատասխանի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հարցեր:

4. **Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ֆակուլտետներում ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

### 5. Ընթացիկ հարցեր:

5.1. **Լսեցին** – «Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության ոլորտում» խորագրով խորհրդաժողովի մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեցին ս. թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպված խորհրդաժողովի վերաբերյալ մանրամասներ, նշվեց, որ այն կրում էր «Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության ոլորտում» խորագիրը: Խորհրդաժողովին, որին մասնակցեց նաև Գավառի պետական համալսարանի պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, ներկայացվեցին Եվրոպական Միության «Tempus» 12 ծրագրերը, որոնցից 6-ին /Hen Gear, Pact, Veritas, Ararat, Athena, Picasa/ անդամակցում է նաև Գավառի պետական համալսարանը:

5.2. **Լսեցին** – ԵՄ «TEMPUS. HEN-GEAR» ծրագրի շրջանակում կայացած հերթական աշխատանքյին հանդիպման մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեց ս. թ. սեպտեմբերի 30-ին Եվրոպական Միության «TEMPUS. HEN-GEAR - Բարձրագույն կրթության ցանցը՝ Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների աշխատունակության համար» ծրագրի շրջանակում Երևանի պետական համալսարանում տեղի ունեցած հերթական աշխատանքային հանդիպման վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ հանդիպմանը մասնակցեցին Գավառի պետական համալսարանի պատվիրակներ Արսեն Ապրոյանը և Գուրգեն Մուրադյանը:

5.3. **Լսեցին** - Եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած ուսանողների հաշվետու ժողովի վերաբերյալ:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի միջազգային ծրագրերի շրջանակում եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած ուսանողների հաշվետու ժողովի վերաբերյալ մանրամասներ: Նշվեց, որ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի ուսանողներ Ռադիկ Սարուխանյանը և Նարեկ Ենոքյանը բովանդակալից

շնորհանդեսների և տեսանյութերի միջոցով լսարանին են ներկայացրել Լեհաստանի Ադամ Միսկիչի անվան Պոզոնանի համալսարանում ԵՄ «ERASMUS MUNDUS. EUROEAST» ծրագրի շրջանակում 10 ամիս ժամկետով ուսումնառության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն՝ մասնավորապես, անդրադառնալով տվյալ բուհի հիմնադրման պատմությանը, կրթական համակարգի առանձնահատկություններին, առկա կրթական ծրագրերին, ուսումնասիրած առարկայացանկին, անցած պրակտիկաներին, սեփական նախաձեռնությամբ կազմակերպված արտալսարանային միջոցառումներին և ակցիաներին, եվրոպական մի շարք պատմամշակութային վայրեր կատարած էքսկուրսիաներին, և հանդիպման ավարտին պատասխանել ներկաների հարցերին:

**5.4. Լսեցին** – 3-րդ հազարամյակի 3-րդ մյուռնօրհիններին ԳՊՀ պատվիրակության մասնակցության մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց ս. թ. սեպտեմբերի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարված եկեղեցական ծիսակարգի՝ Սրբալույս Մյուռնի օրհնության արարողությանը Գավառի պետական համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցության վերաբերյալ տեղեկատվություն:

**5.5. Լսեցին** – ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահի թվով 8-րդ ընտրությունների մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահի թվով 8-րդ ընտրությունների մասին տեղեկատվություն, նշվեց, որ համապատասխան ընթացակարգի համաձայն՝ ՌԻԽ նախագահի թափուր պաշտոնի հավակնորդ միակ թեկնածուն՝ Տնտեսագիտական ֆակուլտետի Չեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման բաժնի 4-րդ կուրսի ուսանող Արեգ Սինանյանը, սահմանված ժամկետներում ինքնառաջադրվել և անհրաժեշտ փաստաթղթային փաթեթին կից՝ ներկայացրել էր նախընտրական ծրագիր, որը մինչ ընտրական բուն գործընթացին անցնելը ևս մեկ անգամ ներկայացվեց ուսանողական հանրույթին: ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների ընտրական հանձնաժողովի անմիջական դիտորդությամբ՝ բուհի առկա ուսուցման ֆակուլտետների բոլոր կուրսերի ավագները և ֆակուլտետային ՌԻԽ անդամները փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրեցին ուսանողական խորհրդի ղեկավար: Արեգ Սինանյանը ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընտրվեց ԳՊՀ Ուսանողական խորհրդի նախորդ նախագահ:

## Որոշեցին.

1. Նախապատրաստական աշխատանքներ իրականացնել միջանկյալ քննությունների կազմակերպման և անցկացման ուղղությամբ, հաստատված ժամանակացույցերը տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում:
2. Ֆակուլտետներում և ամբիոններում իրականացնել վերլուծություններ միջանկյալ քննությունների արդյունքների վերաբերյալ:
3. Մինչև ս.թ. հոկտեմբերի 23-ը ավարտուն տեսքի բերել ԳՊՀ գիտական հոդվածների թիվ 17(2) ժողովածուն և նախապատրաստել տպագրության:
4. ՀՀ ԿԳ նախարարի գրության համաձայն՝ զեկուցագրով ԳՊՀ ռեկտորատ ներկայացնել համապատասխան ֆակուլտետներում հաշմանդամության կարգ ունեցող ուսանողների և աշխատակիցների ցուցակը:
5. Շարունակել այցելությունները դպրոցներ և քոլեջներ:
6. Տեղեկացնել ուսանողներին ս.թ. հոկտեմբերի 10-ին կայանալիք ֆիլմերի դիտման մասին և ապահովել նրանց մասնակցությունը, համապատասխան հայտարարությունը տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում:
7. Տեղեկացնել ԳՊՀ աշխատակազմին և ուսանողներին ս. թ. հոկտեմբերի 16-ին և 17-ին կայանալիք հանդիպումների մասին՝ ապահովելով նրանց մասնակցությունը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

## Արձանագրություն թիվ 35

Գավառի պետական համալսարանի 2015թ. հոկտեմբերի 15-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. ԵՄ «TEMPUS.LeAGUe» ծրագրի հերթական աշխատաժողովի արդյունքների մասին
2. ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Պատմության ամբիոնի 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում
3. «Փախստականների իրավունքները» թեմայով 5-րդ ամառային դպրոցին ԳՊՀ պատվիրակների մասնակցության մասին
4. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
5. Զննաշրջանը և լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
6. Արտասահմանում ուսանած ԳՊՀ ուսանողների շնորհանդես-հաշվետվությունների մասին
7. ԳՊՀ 18-րդ տարեկան գիտաժողովի կազմակերպման մասին՝ նվիրված Հայաստանի անկախության 25-ամյակին
8. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
9. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 13 անդամներ:

#### 1. Լսեցին - ԵՄ «TEMPUS.LeAGUe» ծրագրի հերթական աշխատաժողովի արդյունքների մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց ս.թ. հոկտեմբերի 3-ից 8-ը Եվրոպական Միության «TEMPUS.LeAGUe-Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի հրավերով և ֆինանսավորմամբ կայացած աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ռեկտոր Ռ. Հակոբյանը և Ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լ. Թոռչյանը: Նշվեց, որ աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին ծրագրի միջանկյալ արդյունքները, լրացուցիչ կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում աշխատաշուկայի պահանջների և թիրախային խմբերի կարիքների ու ակնկալիքների ուսումնասիրման և հաշվառման խնդիրները, Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի համալսարաններում շարունակական կրթության կենտրոնների ձևավորման, դրանց կառուցվածքի, գործառույթների, ոչ ֆորմալ կրթության իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման հետ կապված հարցեր: Աշխատաժողովի մասնակիցների ուշադրությանը ներկայացվեց Գավառի պետական համալսարանի փորձը երեք ոչ ֆորմալ կրթական ծրագրի իրականացման՝ «Մարդու իրավունքների», «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքների» և «Անգլերենի» ուսուցման ոլորտում:

2. Լսեցին – ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Պատմության ամբիոնի 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/Չեկ.՝ ԳՊՀ Պատմության ամբիոնի վարիչ Հ. Մ. Հարությունյան/

Ներկայացվեց ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը, անդրադարձ կատարվեց ամբիոնի դասախոսների կողմից տպագրված գիտական հոդվածներին, մենագրություններին, ամբիոնների համալրումներին, կուրսերի ակադեմիական առաջադիմություններին:

#### 3. Լսեցին – «Փախստականների իրավունքները» թեմայով 5-րդ ամառային դպրոցին ԳՊՀ պատվիրակների մասնակցության մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց ս. թ. հոկտեմբեր 8-ին Գլխիցան քաղաքում մեկնարկած «Փախստականների իրավունքները» թեմայով 5-րդ ամառային դպրոցի աշխատանքների մասին, նշվեց, որ դպրոցը կազմակերպվել էր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի ջանքերով՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) փախստականների գերազույն հանձնակատարի (ՓԳՀ) հայաստանյան գրասենյակի հովանու ներքո: Ամառային դպրոցին իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան Գավառի պետական համալսարանի պատվիրակներ, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի

ուսանողներ Ռատիկ Սարուխանյանը, Էմմա Շահբազյանը, Արաքսյա Շանոյանը, Նարեկ Ենոքյանը և Սուրեն Ամիրխանյանը՝ ԳՊՀ պրոռեկտոր, իրավաբանական կլինիկական կրթության ծրագրի ղեկավար Արսեն Ապրոյանի գլխավորությամբ: Պարոն Ապրոյանը ուսանողների համար կարդաց դասախոսություն՝ «Երեխայի իրավունքների պաշտպանությունը փախստականի և ապաստանի հիմնախնդրում» թեմայով, որին հաջորդեց ուսանելի հարցուպատասխան: Եռօրյա վերապատրաստման ավարտին մասնակիցները ստացան վկայագրեր:

**4. Լսեցին** - Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեց ուսանողների հաճախումների, միջանկյալ քննությունների կազմակերպման, կարգապահության ապահովման վերաբերյալ տեղեկատվություն:

**5. Լսեցին** - Քննաշրջանը և լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Ձեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեց կիսամյակային քննություններին չներկայացած, առարկայական պարտքեր ունեցող ուսանողների, լուծարային շրջանի անցկացման ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն:

**6. Քննարկվեցին** - Գավառի պետական համալսարանի միջազգային ծրագրերի շրջանակում եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած ուսանողների՝ իրենց ուսումնառության վերաբերյալ շնորհանդես-հաշվետվությունների ներկայացումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ հարցեր:

**7. Քննարկվեցին** - Հայաստանի անկախության 25-ամյակին նվիրված ԳՊՀ 18-րդ տարեկան գիտաժողովի կազմակերպման մասին հարցեր:

**8. Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ֆակուլտետներում ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները, ուսանողների ֆինանսական պարտքերի վերաբերյալ թվային տվյալներ:

**9. Ընթացիկ հարցեր:**

**9.1. Լսեցին** – Տնտեսագետների՝ Արենիի գինու գործարանում մեկօրյա արտադրական պրակտիկայի մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ղեկան Ս. Գ. Ամիրխանյան/

Ներկայացվեց Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ղեկան Սամվել Ամիրխանյանի և ֆակուլտետի դասախոս Հասմիկ Մարգարյանի նախաձեռնությամբ բուհի Հաշվապահական հաշվառման, Ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման բաժինների ուսանողների համար Արենիի գինու գործարանում կազմակերպված մեկօրյա արտադրական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվություն:

**9.2. Լսեցին** - Հայ կրթական հիմնարկության կրթաթոշակային ծրագրի շրջանակում կայացած հանդիպման մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին ս. թ. հոկտեմբերի 8-ին Երևանի «Անի Պլազա» հյուրանոցի դահլիճում Հայ կրթական հիմնարկության ներկայացուցիչների, բարերարների և հիմնարկության կրթաթոշակային ծրագրում ընդգրկված ուսանողների հետ կազմակերպված հանդիպման վերաբերյալ մանրամասներ:

**9.3. Լսեցին** – Հաշվետու շաբաթվա ընթացքում կազմակերպված միջոցառումների մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց հաշվետու շաբաթվա ընթացքում ԳՊՀ-ում կազմակերպված միջոցառումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

## Որոշեցին.

1. Օրակարգի 7-րդ հարցի համաձայն՝ պատշաճ կազմակերպել Հայաստանի անկախության 25-ամյակին նվիրված ԳՊՀ 18-րդ տարեկան գիտաժողովը:
2. Կազմակերպել Գավառի պետական համալսարանի միջազգային ծրագրերի շրջանակում եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած և գիտահետազոտական աշխատանք կատարած ուսանողների և դասախոսների շնորհանդես-հաշվետվությունների հերթական ներկայացումը:
3. Գպրոց-բուհ համագործակցության ծրագրի շրջանակում կազմել դպրոցներ և քոլեջներ այցելությունների ժամանակացույց:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան



## Արձանագրություն թիվ 36

Գավառի պետական համալսարանի 2015թ. հոկտեմբերի 24-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում
2. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում
3. ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում
4. Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում
5. Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
6. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
7. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 20 անդամներ:

**1. Լսեցին** - ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/Ձեկ. Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ Ա. Ա. Սիմոնյան/

Ներկայացվեցին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

**2. Լսեցին** – ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/Ձեկ. Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Հ. Ա. Մելիքյան/

Ներկայացվեցին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2014-2015 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

**3. Լսեցին** – ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում

/Ձեկ. Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Լ. Ն. Քուրքչյան/

Ներկայացվեցին բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների կիսամյակային և տարեկան առաջադիմությունների ցուցանիշները, միջանկյալ, կիսամյակային և ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցությունների, բաժնից բաժին, ֆակուլտետից ֆակուլտետ տեղափոխությունների, տպագրված հոդվածների, կատարած գիտահետազոտական աշխատանքների, մենագրությունների, կատարած դասալսումների վերաբերյալ թվային տվյալներ, անդրադարձ կատարվեց 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգին:

**4. Լսեցին** – Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Ձեկ. ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի անխափան անցկացման և լուծարային շրջանի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

**5. Լսեցին** – Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Ձեկ. Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկ Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեց հեռակա ուսուցման ֆակուլտետում լուծարային շրջանի պատշաճ կազմակերպման և անցկացման ընթացքը:

**6. Քննարկվեցին -** Ուսանողների ուսման վարձերի հավաքագրման վերաբերյալ հարցեր:

**7. Ընթացիկ հարցեր:**

**7.1. Լսեցին** – Գավառի պետական համալսարանում մեկնարկած «ERASMUS +» ծրագրերի վերաբերյալ:

/Ձեկ.՝ Գ.Պ.Հ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեց բուհի նոր՝ Եվրոպական Միության «Էրասմուս +» միջազգային փոխանակման ծրագրի վերաբերյալ անցկացված շնորհանդեսի արդյունքները:

**7.2. Լսեցին** – Եվրոպական Միության «TEMPUS. PICASA» ծրագրի շրջանակում անցկացված հերթական վերապատրաստման մասին:

/Ձեկ.՝ Գ.Պ.Հ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեց Գավառի պետական համալսարանում կայացած Եվրոպական Միության «TEMPUS. PICASA - Բուհերի միջազգայնացման խթանում Արևելյան հարևանության երկրներում՝ մշակութային և կառուցվածքային փոփոխությունների միջոցով» ծրագրի շրջանակում անցկացված հերթական վերապատրաստման մասին տեղեկատվություն: Նշվեց, որ Գ.Պ.Հ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական համակազմի ներկայացուցիչների մասնկացությամբ քննարկվել են բուհի միջազգայնացման խնդիրները:

**7.3. Լսեցին** – «Էկոտուրիզմի հիմնախնդիրներն ու զարգացման միտումները» խորագրով երիտասարդական գիտական դպրոցին Գավառի պետական համալսարանի պատվիրակության մասնակցության մասին:

/Ձեկ.՝ Գ.Պ.Հ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեց ս. թ. հոկտեմբերի 10-18-ը Երևանում և Գիլիջանում կազմակերպված «Էկոտուրիզմի հիմնախնդիրներն ու զարգացման միտումները» խորագրով երիտասարդական գիտական դպրոցին Գավառի պետական համալսարանի պատվիրակության մասնակցության մասին տեղեկատվություն, նշվեց, որ բուհից դպրոցին մասնակցել են Տնտեսագիտական և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողներ Արեգ Սինանյանը, Լևոն Արզումանյանը, Վարդան Գարեյանը և Տիգրան Մարկոսյանը:

**7.4. Լսեցին** – Շնորհանդես-հաշվետվությունների հերթական ներկայացման մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի միջազգային ծրագրերի շրջանակում եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած և գիտահետազոտական աշխատանք կատարած ուսանողների և դասախոսների շնորհանդես-հաշվետվությունների հերթական ներկայացման վերաբերյալ մանրամասներ:

**Որոշեցին.**

1. Օրակարգային 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերի համաձայն՝ համապատասխան հաշվետվությունների և զարգացման հայեցակարգերի տեքստային տարբերակները սահմանված ժամկետներում ներկայացնել Գ.Պ.Հ ռեկտորատ և Ակադեմիական քաղաքականության վարչություն:
2. Աշխատանքներ իրականացնել ս. թ. դեկտեմբերի 19-ին և 20-ին Գ.Պ.Հ ամենամյա գիտաժողովի կազմակերպման ուղղությամբ:
3. Ս. թ. հոկտեմբերի 28-ին կազմակերպել Գ.Պ.Հ համակազմի հետ «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ, Ժիրայր Նիշանյանի զարմիկ պարոն Վազրիկ Բիկ Նիշանյանի և նրա տիկնոջ՝ Նունիկ Նիշանյանի հանդիպումը՝ վերջիններիս փոխանցելով Գ.Պ.Հ բարերար Ժիրայր Նիշանյանին շնորհած «Գ.Պ.Հ պատվավոր դոկտորի» դիպլոմը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան

## Արձանագրություն թիվ 37

Գավառի պետական համալսարանի 2015թ. հոկտեմբերի 31-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. «TEMPUS. HEN-GEAR» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովի մասին
2. Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում
3. Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 11 անդամներ:

1. **Լսեցին** – «TEMPUS. HEN-GEAR» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովի մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց Եվրոպական Միության «TEMPUS. HEN-GEAR – Բարձրագույն կրթական ցանց՝ ուղղված Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների աշխատունակությանը» ծրագրի շրջանակում Երևանի պետական համալսարանում կայացած ամփոփիչ աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն: Աշխատաժողովին մասնակցեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդաս Ավետիսյանը:

2. **Լսեցին** – Ուսումնական գործընթացը և լուծարային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեց ուսանողների հաճախումների, միջանկյալ քննությունների և լուծարային շրջանի կազմակերպման, կարգապահության ապահովման վերաբերյալ տեղեկատվություն:

3. **Լսեցին** – Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Ձեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին նախապես կազմված ժամանակացույցի համաձայն անցկացված քննաշրջանի արդյունքները, ինչպես նաև տրվեց տեղեկատվություն քննություններին չներկայացած, առարկայական պարտքեր ունեցող ուսանողների վերաբերյալ:

### 4. Ընթացիկ հարցեր:

**4.1. Զննարկվեցին** - Ս. ք. դեկտեմբերի 19-ից 20-ը կայանալիք Գավառի պետական համալսարանի ամենամյա գիտաժողովի նախապատրաստման և անցկացման ուղղությամբ հարցեր:

**4.2. Լսեցին** – «Tempus. LeAGUe» ծրագրի շրջանակում կայացած հերթական վերապատրաստման մասին:

/Ձեկ.՝ Ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ա. Ա. Ղարիբյան/

Ներկայացվեցին Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանում տեղի ունեցած «TEMPUS.LeAGUe-Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի շրջանակում ս.ք. հոկտեմբերի 21-23-ը «Շարունակական կրթությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն» թեմայով վերապատրաստման վերաբերյալ մանրամասներ: Նշվեց, որ Գավառի պետական համալսարանից վերապատրաստմանը մասնակցել են Ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետներ Լիլիթ Թոռչյանը և Կարինե Մարտիսյանը, Օտար լեզվի ամբիոնի դասախոս Աննա Մովսիսյանը, լաբորանտ Նարինե Նալբանդյանը:

- 4.3. **Լսեցին** – Ս. ք. հոկտեմբերի 28-ին ԳՊՀ-ում կազմակերպված հանդիպման մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին ս. ք. հոկտեմբերի 28-ին ԳՊՀ համակազմի հետ «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ, Ժիրայր Նիշանյանի զարմիկ պարոն Վազրիկ Բիկ Նիշանյանի և նրա տիկնոջ՝ Նունիկ Նիշանյանի հանդիպման վերաբերյալ մանրամասներ:

## Որոշեցին.

1. Հետևել դասամատյանների ճշգրիտ վարմանը:
2. Օրակարգի 1-ին և 4.2 հարցերի քննարկումից ելնելով՝ տեղեկացնել ԳՊՀ պատվիրակներին՝ պատրաստելու և ներկայացնելու գիշյալ գործուղումների վերաբերյալ շնորհանդես-հաշվետվություններ:
3. Հետևողական աշխատանքներ իրականացնել «Erasmus +» ծրագրի շրջանակում դիմորդների ապահովման և հայտադիմումների լրացման ուղղությամբ:
4. Տեղեկացնել ԳՊՀ ամբիոններին և բոլոր դասախոսներին ԳՊՀ ամենամյա գիտաժողովի՝ ս. թ. դեկտեմբերի 19-20-ին կազմակերպման մասին՝ նվիրված Հայաստանի անկախության 25-րդ ամյակին:
5. Գպրոց-բուհ համագործակցության շրջանակում վերսկսել այցելությունները և տեղեկատվական արշավները դպրոցներ:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրոչյան

## Արձանագրություն թիվ 38

Գավառի պետական համալսարանի 2015թ. նոյեմբերի 5-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Եվրոպական Միության «TEMPUS.PACT» ծրագրի հերթական աշխատաժողովի արդյունքների մասին
2. ԳՊՀ սոցիալապես անապահով ուսանողների ուսման վճարի փոխհատուցման նվազագույն ՄՈԳ-երի քննարկում
3. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
4. Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
5. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 13 անդամներ:

**1. Լսեցին** – Եվրոպական Միության «TEMPUS.PACT» ծրագրի հերթական աշխատաժողովի արդյունքների մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին ս. թ. հոկտեմբերի 28-30-ը Վրաստանի Հանրապետության Գավիթ Տվիլդիանիի անվան պետական բժշկական համալսարանում Եվրոպական Միության «TEMPUS. PACT - Project Actors Capacity Training in Caucasus – Կովկասյան տարածաշրջանում գիտական ներուժի (գիտահետազոտական նախագծերի մասնակիցների) վերապատրաստում» ծրագրի շրջանակում տեղի ունեցած ամփոփիչ աշխատաժողովի վերաբերյալ մանրամասներ: Նշվեց, որ Գավառի պետական համալսարանի պատվիրակությունն աշխատաժողովին ներկայացել էր բազմանդամ կազմով: ԳՊՀ-ն ներկայացնում էին բուհի վարչատնտեսական գծով պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյանը, միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը, Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Անահիտ Մարգարյանը, լաբորանտ Մարինե Հովհաննիսյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Նոնա Մուրադյանը, Ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Մինանյանը: Որպես ծրագրի առջև դրված նպատակի բարեհաջող կատարում՝ ներկայացվեց ծրագրի շրջանակում մշակված ձեռնարկը՝ բովանդակության սեղմ նկարագրով և բաղկացուցիչ մասերով: Քննարկվեցին ձեռնարկի թարգմանության ձևաչափին ու տպագրման աշխատանքների կազմակերպմանն առնչվող հարցեր: Ծրագրի շրջանակում կայացած աշխատաժողովների արդյունքներն ու ծրագրային վերջնարդյունքներն ամփոփվեցին Կովկասյան համալսարանների պատվիրակներ Ալեքսանդր Մարկարովի (Հայաստան), Ռաֆիա Իսակաևի (Ադրբեջան) և Սալոմե Բինաշվիլիի (Վրաստան) կողմից:

**2. Զննարկվեցին** - ԳՊՀ սոցիալապես անապահով ուսանողների ուսման վճարի փոխհատուցման նվազագույն ՄՈԳ-երի վերաբերյալ հարցեր:

**3. Լսեցին** - Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսանողների հաճախումների վերաբերյալ տեղեկատվություն:

**4. Լսեցին** – Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին նախապես կազմված ժամանակացույցի համաձայն անցկացված քննաշրջանի արդյունքները, ինչպես նաև տրվեց տեղեկատվություն քննություններին չներկայացած, առարկայական պարտքեր ունեցող ուսանողների վերաբերյալ:

**5. Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձի պարտքերն՝ ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**6. Ընթացիկ հարցեր:**

**6.1. Լսեցին** – ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի ուսանողների և շրջանավարտների կազմակերպած քննարկման մասին հարցը:

/Չեկ.՝ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ. Պ. Ավագյան/

Ներկայացվեց ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի ուսանողների և շրջանավարտների՝ իրենց մասնագիտության առավելությունների ու բարդությունների վերաբերյալ քննարկման արդյունքները, առաջարկվեց մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ այդօրինակ սեմինար-քննարկումներ կազմակերպել նաև մարզի հանրակրթական դպրոցներում:

**6.2. Լսեցին** – Մանրանկարչության վերաբերյալ բաց դասախոսության մասին հարցը:

/Չեկ.՝ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս. Գ. Ամիրխանյան/

Ներկայացվեցին ս.թ. նոյեմբերի 4-ին ԳՊՀ-ում Բարեշնորհ Գևորգ Վահան սարկավագ Գևորգյանի կողմից «Հայկական մշակույթը և հայ-ռուսական մանրանկարչություն» թեմայով կազմակերպված բաց դասախոսության վերաբերյալ մանրամասներ:

**Որոշեցին.**

1. ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանի համաձայն՝ սահմանված ժամկետներում, ի լրումն «Փարոս» համակարգում ընդգրկված, սոցիալական անապահովության սահմանային (30) միավորից բարձր միավոր և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների նախորդ անվանացանկի, զեկուցագրով ըստ ֆակուլտետների ռեկտորատ ներկայացնել մնացյալ ուսանողների տվյալները Նախարարություն ներկայացնելու նպատակով:
2. ԳՊՀ որակի ապահովման բաժին ներկայացնել ԳՊՀ ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները և զարգացման հայեցակարգերը:
3. Չեկուցագրով հեռացման ներկայացնել այն ուսանողներին, ում տարկետման ժամկետը լրացել է:
4. Թույլատրել ուսանողներին՝ համապատասխան դիմումի համաձայն՝ ուսման վարձը վճարելու ամսական պարբերականությամբ:
5. Պատրաստել շրջաբերական՝ ծանուցելով ամբիոններին սպասվելիք ստուգումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ:
6. ԳՊՀ ռեկտորատ ներկայացնել զեկուցագիր՝ համապատասխան ֆակուլտետներում ըստ բաժինների և կուրսերի ուսանողների փոխադրումների վերաբերյալ:
7. Նախապատրաստվել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորմանը:
8. Հետևել դասամատյանների և ստուգման գրքույկների ճշգրիտ վարմանը:
9. Ապահովել ԳՊՀ ուսանողների մասնակցությունը ս. թ. նոյեմբերի 10-ին Երևանի Կ. Գեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում Ուսանողների միջազգային օրվան նվիրված տոնական համերգին:
10. Ապահովել համալսարանականների մասնակցությունը ս. թ. նոյեմբերի 11-ին Եվրոպական Միության «Tempus. Rethink» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանում կայանալիք հերթական աշխատաժողովի աշխատանքներին:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրոչյան

# Արձանագրություն թիվ 39

Գավառի պետական համալսարանի 2015թ. նոյեմբերի 12-ի ռեկտորատի նիստի

## Օրակարգ

1. ԳՊՀ-ում կայացած Եվրոպական Միության «TEMPUS.RETHINK» ծրագրի աշխատաժողովի վերաբերյալ
2. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
3. Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
4. Ուսանողների միջազգային օրվան նվիրված միջոցառման մասին
5. ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման գործընթացի մասին
6. Եղեգնաձորի և Վայքի դպրոցներ այցելության մասին
7. Հեռակա ուսուցման ֆակուլտետի I կուրսի ուսանողների և նրանց ծնողների հետ հանդիպումներ կազմակերպելու մասին
8. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
9. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 11 անդամներ:

**1. Լսեցին** – Գավառի պետական համալսարանում կայացած ԵՄ «TEMPUS. RETHINK» ծրագրի հերթական աշխատաժողովի մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց Եվրոպական Միության «TEMPUS. RETHINK – Կրթության բարեփոխում՝ գիտելիքների միջազգային փոխանակման միջոցով» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանում կազմակերպված հերթական աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ բուհում հյուրընկալվել էին պատվիրակություններ Պորտուգալիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Ուկրաինայի, Բելոռուսի, Մոլդովայի և Վրաստանի բուհերից: Աշխատաժողովի ընթացքում ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդիստ, ծրագրի աշխատանքային խմբի անդամ Լիլիթ Թոռչյանը բովանդակալից շնորհանդեսի միջոցով ներկայացրեց բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացման էությունը, բարձրագույն ազգային կրթությունից դեպի միջազգայնացում տանող ուղին, ԳՊՀ միջազգայնացման տեսլականը, քաղաքականությունը, փուլերը, ցուցանիշները, ուղիներն ու խնդիրները, գործընթացի պահանջները, անդրադարձավ համագործակից երկրներին ու նրանց հետ համատեղ իրականացվող ծրագրերին:

**2. Լսեցին** – Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

**3. Լսեցին** – Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Ձեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին նախապես կազմված ժամանակացույցի համաձայն անցկացված քննաշրջանի արդյունքները, ինչպես նաև տրվեց տեղեկատվություն քննություններին չներկայացած, առարկայական պարտքեր ունեցող ուսանողների վերաբերյալ:

**4. Լսեցին** – Ուսանողների միջազգային օրվան նվիրված միջոցառման մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ղեկան Ս. Գ. Ամիրխանյան, ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ղեկան Հ. Գ. Բաջոյան, փոխղեկան Գ. Վ. Գևորգյան, փոխղեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեցին ուսանողների միջազգային օրվան նվիրված միջոցառմանը Գավառի պետական համալսարանի ուսանողների և դասախոսների մասնկացության վերաբերյալ մանրամասներ:

**5. Զննարկվեցին** - ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման գործընթացին ԳՊՀ-ի նախապատրաստման մասին հարցեր:

**6. Լսեցին** – Եղեգնաձորի և Վայքի ավագ դպրոցներ այցելության մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ղեկան Ս. Գ. Ամիրխանյան/

Ներկայացվեց ս. թ. նոյեմբերի 10-ին համալսարանականների՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի և Վայքի դպրոցներ այցելության մասին տեղեկատվություն:

**7. Զննարկվեցին** - Հեռակա ուսուցման ֆակուլտետի I կուրսի ուսանողների և նրանց ծնողների հետ հանդիպումներ կազմակերպելու մասին հարցեր:

**8. Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Ձեկ.՝ Գ.Պ.Հ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձի պարտքերն՝ ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**9. Ընթացիկ հարցեր:**

9.1. **Լսեցին** – Հաշվետու շաբաթվա ընթացքում կայացած միջոցառումների մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին հաշվետու շաբաթվա ընթացքում կայացած միջոցառումների, հանդիպումների, սեմինար-քննարկումների, բաց դասախոսությունների վերաբերյալ մանրամասներ:

9.2. **Լսեցին** – Բուհի կրթաթոշակային ծրագրերի ընթացիկ վիճակի մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց բուհի կրթաթոշակային մի շարք ծրագրերի ընթացիկ վիճակը:

**Որոշեցին.**

1. Ս.թ. նոյեմբերի 14-ին, 15-ին և 21-ին ըստ բաժինների համապատասխանաբար կազմակերպել Հեռակա ուսուցման ֆակուլտետ ընդունված առաջին կուրսեցիների ծնողների հետ հանդիպումները:
2. ՀՀ ԿԳ նախարարի հրամանի համաձայն՝ ծանոթանալ ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման գործընթացի մեթոդաբանությանը և ընդունել ի կատարումն մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը:
3. Պատրաստել շրջաբերական՝ ծանուցելով ամբիոններին սպասվելիք ստուգումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ:
4. Վերսկսել մարզի դպրոցներ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ այցելությունները:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան



## Արձանագրություն թիվ 40

Գավառի պետական համալսարանի 2015թ. նոյեմբերի 19-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Փարիզում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախարարական հանդիպման և դրա արդյունքում ընդունված «Կրթություն-2030» հիմնարար փաստաթղթի վերաբերյալ
2. Ծաղկաձորում կայացած «Բարեվարքության ամրապնդում բարձրագույն ուսումնական համակարգում» թեմայով համաժողովի վերաբերյալ
3. Եվրոպական Միության «TEMPUS.PICASA» ծրագրի աշխատաժողովի վերաբերյալ
4. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
5. Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում
6. «Լավագույն ուսանող» անվանական կրթաթոշակի մրցույթի մասնակցության վերաբերյալ
7. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
8. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 13 անդամներ:

**1. Զննարկվեցին** – Փարիզում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախարարական հանդիպման և դրա արդյունքում ընդունված «Կրթություն-2030» հիմնարար փաստաթղթի վերաբերյալ հարցեր:

**2. Լսեցին** – Ծաղկաձորում կայացած «Բարեվարքության ամրապնդում բարձրագույն ուսումնական համակարգում» թեմայով համաժողովի վերաբերյալ:

/Չեկ.՝ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս. Գ. Ամիրխանյան, ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ. Ա. Ասոյան/

Ներկայացվեցին ս. թ. նոյեմբերի 16-17-ը Ծաղկաձոր քաղաքում կայացած «Բարեվարքության ամրապնդում բարձրագույն ուսումնական համակարգում» խորագրով համաժողովի վերաբերյալ մանրամասներ, նշվեց, որ համաժողովի աշխատանքներին Գավառի պետական համալսարանից մասնակցեցին Բանասիրական և Տնտեսագիտական ֆակուլտետների դեկաններ Թաթուլ Ասոյանը և Սամվել Ամիրխանյանը, Ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Սինանյանը:

**3. Լսեցին** – Եվրոպական Միության «TEMPUS.PICASA» ծրագրի աշխատաժողովի վերաբերյալ:

/Չեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեց ս. թ. նոյեմբերի 16-18-ը Երևանի պետական համալսարանում Եվրոպական Միության «TEMPUS. PICASA-Promoting Internationalization Of Heis In Eastern Neighbourhood Countries Through Cultural And Structural Adaptations - Բուհերի միջազգայնացման խթանում արևելյան հարևանության երկրներում՝ մշակութային և կառուցվածքային փոփոխությունների միջոցով» ծրագրի աշխատանքային երրորդ ենթափաթեթի շրջանակում տեղի ունեցած հերթական աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ աշխատաժողովին Գավառի պետական համալսարանից մասնակցել են բուհի ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը և հիշյալ վարչության մեթոդիստ Լիլիթ Թոռչյանը:

**4. Լսեցին** – Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացը, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքները:

**5. Լսեցին** – Լուծարային շրջանը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Չեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին նախապես կազմված ժամանակացույցի համաձայն անցկացված քննաշրջանի արդյունքները, ինչպես նաև տրվեց տեղեկատվություն քննություններին չներկայացած, առարկայական պարտքերը չմարած ուսանողների վերաբերյալ:

**6. Զննարկվեցին** – ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի համաձայն՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշման հիման վրա «Լավագույն ուսանող» անվանական կրթաթոշակի մրցույթին Գավառի պետական համալսարանի լավագույն ուսանողների մասնակցության վերաբերյալ հարցեր:

**7. Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձի պարտքերն՝ ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**8. Ընթացիկ հարցեր:**

**8.1. Ջննարկվեցին** – ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան գրության համաձայն՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրելու նպատակով բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների վերաբերյալ հավելյալ տեղեկատվության ներկայացման վերաբերյալ հարցեր:

**8.2. Լսեցին** – Հաշվետու շաբաթվա ընթացքում Գավառի պետական համալսարանում կազմակերպված միջոցառումների մասին:

/Ձեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց հաշվետու շաբաթվա ընթացքում կազմակերպված միջոցառումների, ինչպես նաև ծրագրվող հանդիպումների և դպրոցներ այցելությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

**Որոշեցին.**

1. Օրակարգի 6-րդ հարցի համաձայն՝ «Լավագույն ուսանող - 2015» մրցույթի շրջանակում ըստ ֆակուլտետների հավաքագրել համապատասխան ուսանողների անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները, կից զեկուցագրով ներկայացնել այդ նպատակով ստեղծված հանձնաժողովին, այնուհետև սահմանված կարգով ապահովել համապատասխան անվանակարգերում բուհի լավագույն ուսանողների մասնակցությունը մրցույթի հանրապետական փուլին:
2. Օրակարգի ընթացիկ հարցերի 8.1 ենթակետի համաձայն՝ մինչև ս. թ. նոյեմբերի 29-ը կանոնակարգված ձևով ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացնել համապատասխան տեղեկատվությունը:
3. Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ միջազգային ծրագրերի շրջանակում ուսանողների հայտերի նախապատրաստման ուղղությամբ:
4. Ավարտուն տեսքի բերել ԳՊՀ գիտական հոդվածների թիվ 17 (2) ժողովածուն և հայտարարել մրցույթ, կազմակերպել տպագրությունը:
5. ՀՀ ԿԳ նախարարի հրամանի համաձայն՝ ծանոթանալ ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման գործընթացի մեթոդաբանությանը և ընդունել ի կատարումն մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը:
6. Տեղեկացնել ԳՊՀ ամբիոններին և բոլոր դասախոսներին Հայաստանի անկախության 25-րդ ամյակին նվիրված ԳՊՀ ամենամյա 18 (3)-րդ գիտաժողովին ներկայացնելու զեկուցողների տվյալները և զեկուցումների վերնագրերը մինչև ս.թ. դեկտեմբերի 3-ը:
7. Հետևել դասամատյանների ճշգրիտ վարմանը:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան

# Արձանագրություն թիվ 41

Գավառի պետական համալսարանի 2015թ. նոյեմբերի 28-ի ռեկտորատի նիստի

## Օրակարգ

1. ԳՊՀ անդամակցությամբ ԵՄ «TEMPUS» ծրագրերի իրականացման ընթացքը
2. ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման գործընթացին նախապատրաստվելու մասին
3. «ՀՀ լավագույն ուսանող» մրցույթին ԳՊՀ ուսանողների մասնակցության մասին
4. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
5. ԳՊՀ 18-րդ գիտաժողովի կազմակերպման մասին
6. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016թ.-ի I կիսամյակի նախապատրաստման մասին
7. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
8. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 15 անդամներ:

Մինչ նիստի մեկնարկը ԳՊՀ ռեկտոր Ռ-ուզաննա Հակոբյանը ներկայացրեց ռեկտորների խորհրդի հերթական նիստի արդյունքները:

**1. Լսեցին** – ԳՊՀ անդամակցությամբ ԵՄ «TEMPUS» ծրագրերի իրականացման ընթացքը:

/Ձեկ.՝ ԳՊՀ պրոռեկտորներ Ն. Ա. Կուտուզյան, Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեցին ԵՄ «TEMPUS.GOVERN», «TEMPUS.ARMENQA», «TEMPUS. HEN GEAR», «TEMPUS.ARARAT», «TEMPUS.LcAGUe», «TEMPUS.PACT», «TEMPUS.RETHINK» ծրագրերի շրջանակներում կայացած միջազգային հանդիպումների, անցկացված մշտադիտարկումների, կազմակերպված խմբային աշխատանքների և քննարկումների վերաբերյալ մանրամասներ:

**2. Քննարկվեցին** – ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման գործընթացին նախապատրաստվելու մասին հարցեր:

**3. Քննարկվեցին** – «ՀՀ լավագույն ուսանող» մրցույթին ԳՊՀ ուսանողների մասնակցության մասին հարցեր:

**4. Լսեցին** – Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացը, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքները:

**5. Քննարկվեցին** – ԳՊՀ 18-րդ /3-րդ/ գիտաժողովի կազմակերպման մասին վերաբերյալ հարցեր:

**6. Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016թ.-ի I կիսամյակի նախապատրաստման մասին:

/Ձեկ.՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխղեկան Ա. Ե. Համբարձումյան/

Ներկայացվեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման, դասացուցակների կազմման, լսարանների հստակեցման, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «E-learning-GSU» համակարգի առարկայական տիրույթներում համապատասխան տեղեկատվության համալրման, ծանրաբեռնվածությունների ստուգման, ակադեմիական քարտերի պատրաստման շուրջ հարցեր:

**7. Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Ձեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկավարներ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձի պարտքերն՝ ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**8. Ընթացիկ հարցեր:**

**8.1. Լսեցին** – Գավառի պետական համալսարանի պատվիրակության՝ մարզի դպրոցներ և քոլեջներ այցելությունների մասին:

/Ձեկ.՝ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ղեկան Մ. Պ. Ավագյան, ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ղեկան Ս. Գ. Ամիրխանյան/

Ներկայացվեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 1, 2, Հացառատի թիվ 2, 8, Մարտունու ավագ դպրոցներ և Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ կատարած այցելությունների վերաբերյալ տեղեկատվություն:

**8.2. Լսեցին** – Հաշվետու շաբաթվա ընթացքում Գավառի պետական համալսարանում կազմակերպված միջոցառումների մասին:

/Ձեկ՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց հաշվետու շաբաթվա ընթացքում կազմակերպված միջոցառումների, մարզի դպրոցներ ծրագրված այցելությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

### **Որոշեցին.**

1. «Լավագույն ուսանող - 2015» մրցույթի շրջանակում ըստ ֆակուլտետների նախապատրաստել համապատասխան ուսանողների անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները, կից զեկուցագրով ներկայացնել այդ նպատակով ստեղծված հանձնաժողովին, այնուհետև սահմանված կարգով ապահովել համապատասխան անվանակարգերում բուհի լավագույն ուսանողների մասնակցությունը մրցույթի հանրապետական փուլին, փաստաթղթային փաթեթները ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարություն:
2. Մինչև ս. թ. նոյեմբերի 29-ը ըստ ֆակուլտետների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների՝ ներկայացնել ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի վարկանիշավորման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը:
3. Աշխատանքներ իրականացնել «Erasmus +» ծրագրերի շրջանակում ԳՊՀ ուսանողների հայտերի նախապատրաստման ուղղությամբ:
4. Աշխատանքներ իրականացնել ս. թ. դեկտեմբերի 26-ին ԳՊՀ ամենամյա գիտաժողովի կազմակերպման ուղղությամբ՝ նվիրված Հայաստանի անկախության 25-ամյակին:
5. Ս. թ. դեկտեմբերի 2-ին և 4-ին կազմակերպել ուսանողների հանդիպումներ և քննարկումներ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և «Ինգո Արմենիա» ապահովագրական գործակալության ներկայացուցիչների հետ:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Մկրտչյան

## Արձանագրություն թիվ 42

Գավառի պետական համալսարանի 2015թ. դեկտեմբերի 10-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016թ. առաջին կիսամյակի նախապատրաստման ընթացքը
3. 2016-2017 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման մասին
4. 2016-2017 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության հայտերի ներկայացման մասին
5. «ԳՊՀ լավագույն ուսանող», «ԳՊՀ լավագույն կուրս» մրցույթի անցկացման հարցը
6. Ուսանողների ակադեմիական և ֆինանսական կարգապահության բարձրացման կառուցակարգերը
7. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմի կարգապահության ապահովման միջոցները
8. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 9 անդամներ:

**1. Լսեցին** - Ուսումնական գործընթացը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսանողների հաճախումների, մագիստրատուրայի դասերի ընթացքի վերաբերյալ հարցեր:

**2. Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016թ. առաջին կիսամյակի նախապատրաստման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման, դասացուցակների կազմման, լսարանների հստակեցման, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «E-learning-GSU» համակարգի առարկայական տիրույթներում համապատասխան տեղեկատվության համալրման, ուսումնական ծանրաբեռնվածությունների ստուգման, ակադեմիական քարտերի պատրաստման վերաբերյալ հարցեր:

**3. Զննարկվեցին** – 2016-2017 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման մասին հարցեր:

**4. Լսեցին** – 2016-2017 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության հայտերի ներկայացման մասին հարցը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ըստ ֆակուլտետների ներկայացվեցին 2016-2017 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության հնարավոր հավակնորդների վերաբերյալ մանրամասներ:

**5. Զննարկվեցին** – «ԳՊՀ լավագույն ուսանող», «ԳՊՀ լավագույն կուրս» մրցույթի անցկացման մասին հարցեր:

**6. Զննարկվեցին** – Ուսանողների ակադեմիական և ֆինանսական կարգապահության բարձրացման կառուցակարգերի վերաբերյալ հարցեր:

**7. Զննարկվեցին** – ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմի կարգապահության ապահովման միջոցների հստակեցման մասին հարցեր:

**8. Ընթացիկ հարցեր:**

**8.1. Լսեցին** – ԵՄ «Tempus. Veritas» ծրագրի շրջանակում կայացած ճանաչողական այցի մասին:

/Չեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Հ. Ապրոյան/

Ներկայացվեց ս. թ. նոյեմբերի 14-ից 29-ը Եվրոպական Միության «Tempus. Veritas - Չալցքուրգյան սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագրի շրջանակում գործընկերների համար դեպի եվրոպական առաջատար բուհեր կազմակերպված ճանաչողական այցերի մասին տեղեկատվություն: Նշվեց, որ Գավառի պետական համալսարանից շրջայցերին մասնակցել են բուհի Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հրաչյա Չաքոյանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը: Այցերի ընթացքում ծրագրի շահակիցները եղել են

Շվեդիայի Տեխնոլոգիաների (KTH) թագավորական ինստիտուտում, Իսպանիայի Ջիրոնա, Մեծ Բրիտանիայի Բաթ Սփա և Գերմանիայի Հեյդելբերգ համալսարաններում:

**8.2. Լսեցի՞ն** – «Ինգո Արմենիա» ապահովագրական գործակալության ներկայացուցիչների հետ հանդիպման մասին:

/Ձեկ՝ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս. Գ. Ամիրխանյան/

Ներկայացվեց «Ինգո Արմենիա» ապահովագրական գործակալության և ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպման մասին, նշվեց, որ Գավառի պետական համալսարանում էին ընկերության մարզային պատասխանատու Արտակ Գաբրիելյանը և գործակալ Տիգրան Բաղդասարյանը: Հանդիպմանը անդրադարձ կատարվեց «Ինգո»-ի կողմից մատուցվող ծառայություններին, որոնք, մասնավորապես, վերաբերում են ԱՊՊԱ, ԿԱՍԿՈ, գույքի, բժշկական, արտասահման մեկնողների, դժբախտ պատահարներից ապահովագրություններին:

### **Որոշեցի՞ն.**

1. Օրակարգի 3-րդ հարցի համաձայն՝ նոր մասնագիտությունների համար մշակել նոր կրթական ծրագրեր:
2. Մինչև ս. թ. դեկտեմբերի 24-ը ռեկտորատ ներկայացնել գեկուցագրեր՝ ԳՊՀ քննությունների ավտոմատացման «Examination GSU» համակարգի շրջանակում ամբիոններում տարբեր առարկաների գծով թեստերի համալրման վերաբերյալ:
3. Աշխատանքներ իրականացնել ս. թ. դեկտեմբերի 26-ին և 27-ին ԳՊՀ ամենամյա՝ 18-րդ գիտաժողովի կազմակերպման ուղղությամբ՝ նվիրված Հայաստանի անկախության 25-ամյակին:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան

# Արձանագրություն թիվ 43

Գավառի պետական համալսարանի 2015թ. դեկտեմբերի 17-ի ռեկտորատի նիստի

## Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը և միջանկյալ քննությունների ընթացքը առկա ուսուցման ֆակուլտետներում
2. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016թ. ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստման ընթացքը
3. 2016թ. մագիստրատուրայի ընդունելության նախապատրաստման մասին
4. Հայաստանի անկախության 25-ամյակին նվիրված ԳՊՀ 18-րդ (3-րդ) գիտաժողովի նախապատրաստման մասին
5. Կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագրի նախագծի մասին
6. ԳՊՀ 2016-2021թթ. զարգացման և բարեփոխման հայեցակարգի նախագծի մասին
7. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
8. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 14 անդամներ:

**1. Լսեցին** - Ուսումնական գործընթացը և միջանկյալ քննությունների ընթացքը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի անխափան անցկացման և միջանկյալ քննությունների կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

**2. Լսեցին** - ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016թ. ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստման ընթացքը:

/Չեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեց Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016թ. թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների ընթացքը:

**3. Քննարկվեցին** - 2016թ. մագիստրատուրայի ընդունելության նախապատրաստման մասին հարցեր:

**4. Քննարկվեց** - Հայաստանի անկախության 25-ամյակին նվիրված ԳՊՀ 18-րդ (3-րդ) գիտաժողովի նախապատրաստման գործընթացը:

**5. Քննարկվեցին** - Կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագրի նախագծի դրույթները:

**6. Քննարկվեցին** - ԳՊՀ 2016-2021թթ. զարգացման և բարեփոխման հայեցակարգի նախագծի մասին հարցեր:

**7. Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձի պարտքերն՝ ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

**8. Ընթացիկ հարցեր:**

**8.1. Լսեցին** – Ակադեմիական քաղաքականության վարչության կողմից ԳՊՀ ամբիոններում իրականացվող ստուգումների ընթացքի մասին:

/Չեկ.՝ Ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ա. Ա. Ղարիբյան/

Ներկայացվեց Ակադեմիական քաղաքականության վարչության կողմից համապատասխան ֆակուլտետներում և ամբիոններում իրականացվող ստուգումների ընթացքի մասին տեղեկատվություն:

**8.2. Լսեցին** – Երիտասարդների և երեխաների կարիքների գնահատման ծրագրի մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեցին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և “Youth Policy Labs” կազմակերպության փորձագետների աջակցմամբ կազմակերպվող երիտասարդների և երեխաների կարիքների գնահատման ծրագրի վերաբերյալ մանրամասներ, որի համար նախատեսվում են մի շարք հանդիպումներ թիրախային խմբերի հետ:

## Որոշեցին.

1. Օրակարգի 3-րդ հարցի համաձայն՝ մինչև 2016 թ. հունվարի 15-ը զեկուցագրով ըստ ֆակուլտետների ռեկտորատ ներկայացնել 2016-2017 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության հավակնորդների ցուցակը:
2. Մինչև ս. թ. դեկտեմբերի 25-ը ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներից հավաքագրել 2016 ֆինանսական տարվա պահանջագրերը:
3. Մինչև ս. թ. դեկտեմբերի 27-ը ներկայացնել դրույթներ և նկատառումներ ԳՊՀ 2016-2021թթ. զարգացման և բարեփոխման հայեցակարգի վերաբերյալ:
4. Համալսարանում ստեղծել թիրախային խումբ և կազմակերպել հանդիպումը սահմանված կարգով:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան



## Արձանագրություն թիվ 44

Գավառի պետական համալսարանի 2015թ. դեկտեմբերի 24-ի ռեկտորատի ընդլայնված նիստի

### Օրակարգ

1. ԳՊՀ «GSU. Mobile» (ԳՊՀ բջջային (մոբայլ) Android հավելվածի ներկայացում և քննարկում
2. ԳՊՀ 2011-2016թթ. ռազմավարական ծրագրի իրականացմանը միտված՝ բուհի կառուցվածքային ստորաբաժանումների 2014-2015 ուստարվա գործողությունների ու դրանց արդյունքների մշտադիտարկման, և 2015-2016 ուստարվա գործողությունների պլանի ներկայացում
3. ԳՊՀ «Examination.gsu» համակարգի առարկայական թեստային բազայի համալրման հարցը
4. Ուսումնական գործընթացը և ստուգարքային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում
5. Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016թ. ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստման ընթացքը
6. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
7. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին ԳՊՀ ռեկտորատի 21 անդամներ:

1. **Լսեցին** – ԳՊՀ «GSU. Mobile» (ԳՊՀ բջջային (մոբայլ) Android հավելվածի ներկայացում և քննարկում:

/Չեկ.՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վ. Կ. Ավետիսյան/

Ներկայացվեց Գավառի պետական համալսարանի «GSU Mobile» Android հավելվածի շնորհանդեսը: Նախագծի հեղինակ-մշակողներ, ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը և Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանող Հայկ Դանոյանը բովանդակալից շնորհանդեսի միջոցով նախ ներկայացրին հավելվածների զարգացման պատմությունը՝ անդրադառնալով DESKTOP համակարգչային, WEB և MOBILE հավելվածներին: Դասախոսը և ուսանողը համատեղ առցանց ռեժիմով ներկայացրին հավելվածի բովանդակությունը, կառուցվածքը և գործառույթները, ընձեռած հնարավորությունները, անդրադարձան ծրագրի տեղեկատվական, ծրագրային և տեխնիկական ապահովումներին:

2. **Քննարկվեցին** – ԳՊՀ 2011-2016թթ. ռազմավարական ծրագրի իրականացմանը միտված՝ բուհի կառուցվածքային ստորաբաժանումների 2014-2015 ուստարվա գործողությունների ու դրանց արդյունքների մշտադիտարկման, և 2015-2016 ուստարվա գործողությունների պլանի ներկայացման վերաբերյալ հարցեր:

3. **Քննարկվեցին** – ԳՊՀ «Examination.gsu» համակարգի առարկայական թեստային բազայի համալրման վերաբերյալ հարցեր:

4. **Լսեցին** – Ուսումնական գործընթացը և ստուգարքային շրջանը առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեց առկա ուսուցման ֆակուլտետներում ստուգարքային շրջանի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն:

5. **Քննարկվեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016թ. ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստման, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի լրամշակման, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «E-Learning. GSU» համակարգի բարելավման ընթացքի վերաբերյալ հարցեր:

6. **Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Չեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձի պարտքերն՝ ըստ բաժինների և կուրսերի, դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

7. **Ընթացիկ հարցեր:**

- 7.1. **Լսեցին** – Հաշվետու շաբաթվա ընթացքում Գավառի պետական համալսարանում կազմակերպված սեմինար-քննարկումների, բաց դասերի, հանդիպումների և միջոցառումների մասին:

/Չեկ.՝ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Վ. Մուրադյան/

Ներկայացվեց հաշվետու շաբաթվա ընթացքում կազմակերպված սեմինար-քննարկումների, բաց դասերի, հանդիպումների, միջոցառումների, դպրոցների աշակերտների՝ բուհ կատարած այցելությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

## Որոշեցին.

1. Մինչև 2016 թ. հունվարի 28-ը զեկուցագրով ներկայացնել առաջարկություններ ԳՊՀ 2016-2021թթ. զարգացման և բարեփոխման հայեցակարգի վերաբերյալ:
2. 2016 թ. հունվարի 8-ին Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016թ. ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերի մեկնարկի հայտարարությունը տեղադրել ԳՊՀ պաշտոնական կայքում:
3. Վերանայել ուսանողների և դասախոսների վերաբերյալ ԳՊՀ բոլոր հարցաշարերը և ներկայացնել առաջարկություններ՝ դրանց բարելավման նպատակով:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Հ. Է. Սկրտչյան